Քրիստոնյա Հայաստան

2006, ՄԱՐՏ Ա, ԹԻՎ 5 (217)

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ*

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լյուքսեմբուրգի կառավարող՝ Քրիստոնեա-սոցիալական կուսակցության խորհրդարանական խմբակցության ղեկավարին



Մարտի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լյուքսեմբուրգի կառավարող՝ Քրիստոնեա-սոցիալական կուսակցության խորհրդարանական խմբակցության ղեկավար Ֆ. Էնգելին եւ Պետանժի քաղաքապետ Պ. Սիբելաներին:

Ողջունելով հյուրերին՝ Հայոց Հայրապետը նշեց, որ յուրաքանչյուր նման այց նպաստում է երկու պետությունների մերձեցմանը:

Հանդիպմանն անդրադարձ եղավ տարածաշրջանի խնդիրներին, Եկեղեցիների համագործակցությանը:

Հանդիպմանը ներկա էին Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նագդալյանը եւ Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի՝ Լինի շրջանի փոխանորդ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը:

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում տիկնանց եւ օրիորդաց Մարտի 8-ի տոնական առիթով:*

*Մեր մաղթանքն է, որ տոնը սկիզբ առնող գարնան հետ ուրախություն բերի բոլոր կանանց, եւ որ նրանց սրտերն ու հոգիները միշտ լուսավորված լինեն հավատի, հույսի ու սիրո երկնառաք շնորհներով:*

*Թող Տերը Ամենախնամ Իր Սուրբ Աջի հովանու ներքո քաջառողջ ու երջանիկ եւ եռանդաշատ պահպանի սիրելի մեր մայրերին, քույրերին ու դուստրերին՝ հանուն արժանավոր զավակների դաստիարակության, ընտանիքի զորացման եւ հայրենական մեր կյանքի շինության:*

*Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերն ու խաղաղությունը թող լինեն Ձեզ ամենքիդ հետ. Ամեն:*

*Օրհնությամբ՝*

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով



Մարտի 1-2-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, բարձր նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Ողջունելով Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին՝ Հայոց Հայրապետն անդրադարձավ օրակարգում առկա խնդիրներին եւ հաջողություն մաղթեց առաջիկա աշխատանքներում: Ապա Նորին Սրբությունը ժողովականներին ներկայացրեց Գերագույն հոգեւոր խորհրդի նոր անդամ տիար Վիգեն Կարապետյանին (Ֆրանսիա):

Որպես ատենապետեր՝ ժողովը վարեցին Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը եւ ԱՄՆ Արեւմտյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը:

Ժողովին Գերագույն հոգեւոր խորհուրդը քննության առավ թեմական եւ համայնքային տիպային կանոնադրության հայեցակարգային հիմնադրույթները: Անդրադարձ կատարվեց նաեւ Ֆրանսիայի հայոց թեմի կազմավորման գործընթացին:

Գերագույն հոգեւոր խորհրդի նիստին հրավիրվեց ԱԺ փոխնախագահ Տիգրան Թորոսյանը, ով լուսաբանություններ տվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն վերաբերող սահմանադրական հոդվածից բխող՝ Եկեղեցի-պետություն հարաբերությունները կարգավորող օրենքի մշակման գործընթացի մասին:

Ժողովին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը ներկայացրեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 9-րդ համագումարի արդյունքները, որին Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը ներկայացված էր ընդարձակ պատվիրակությամբ:

Քննության առնվեցին նաեւ քրիստոնեական դաստիարակությանը, եկեղեցականների պատրաստությանն առնչվող, ինչպես նաեւ այլ խնդիրներ:

Ժողովը փակվեց Նորին Սրբության գնահատանքի խոսքով եւ «Պահպանիչ» աղոթքով:

***

Նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցությամբ Գերագույն հոգեւոր խորհրդի հայաստանյան անդամների՝ մարտի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կրկին գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Ժողովում զեկույցով հանդես եկավ նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը: Սրբազանը ներկայացրեց Վիրահայոց թեմում իրականացվող հովվական, հոգեւոր-քարոզչական ու եկեղեցաշինական գործունեությունը: Ի մասնավորի նշեց, որ այս տարի ծրագրվում է վերանորոգել Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եւ Սուրբ Էջմիածին եկեղեցիները, որոնց նախագծային աշխատանքներն ավարտական փուլում են: Սրբազան հայրն ուրախությամբ արձանագրեց թեմում տիրող հոգեւոր վերաշխուժությունը՝ միաժամանակ ընդգծելով թեմում եւ հատկապես Ջավախքի փոխառաջնորդությունում նոր եկեղեցականներ ունենալու անհրաժեշտությունը: Նա նաեւ անդրադարձավ, որ դեռեւս լուծում չեն ստացել Վրաստանի պետական իշխանություններին ներկայացված դիմումները՝ թեմին հանրային իրավունքի կարգավիճակ շնորհելու եւ հայոց պատմական վեց եկեղեցիները վերադարձնելու մասին: Սրբազանը հայտնեց, որ Վրաստանում շարունակվում են զանգվածային որոշ լրատվամիջոցներով հակահայկական հրապարակումներն ու ելույթները, որոնք երկրում ստեղծում են անհանդուրժողության տրամադրություններ եւ լարվածություն:

Ի պատասխան Գերագույն հոգեւոր խորհրդի հարցումի՝ Վազգեն եպիսկոպոսը հաստատեց, որ Վրաց Ուղղափառ Եկեղեցու Սինոդը ս/թ. փետրվարի 6-ի որոշմամբ «...պատմական իր թեմը վերականգնելու նպատակով» Տաշիր-Ագարակ անունով նոր թեմ է հռչակել՝ այն ենթարկելով Վրաստանի Դմանիսիի թեմի եպիսկոպոսի հոգեւոր իշխանությանը:

Գերագույն հոգեւոր խորհուրդը տարակուսանք հայտնեց նախ, որ Վրաց Ուղղափառ Եկեղեցին թեմի հռչակման մասին չի տեղեկացրել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նկատի ունենալով, որ այն հաստատվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջանում, եւ երկրորդ, որ Սինոդը նոր թեմ է հռչակում մի տարածքում, որտեղ Վրաց Եկեղեցին չունի հավատացյալներ, այն դեպքում, երբ Վրաստանում անտեսվում է Վիրահայոց թեմին իրավաբանական համարժեք կարգավիճակ շնորհելու եւ հայկական եկեղեցիները վերադարձնելու հարյուր հազարավոր հավատացյալ հայորդիների արդար իրավունքը:

Գերագույն հոգեւոր խորհուրդը գոհունակությամբ ու գնահատանքով ընդունեց Վիրահայոց թեմի առաջնորդի ներկայացրած հանգամանալից զեկույցը, ինչպես նաեւ իրականացրած արդյունավոր առաքելությունը եւ հորդորեց նույն նախանձախնդրությամբ շարունակել ջանքերը՝ ի պայծառություն Վիրահայոց թեմի եւ ի խնդիր հայ եւ վրաց ժողովուրդների ու Եկեղեցիների եղբայրական դարավոր հարաբերությունների զորացման:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Ավարտվեց ԵՀԽ իններորդ համագումարը



Փետրվարի 23-ին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի իններորդ համագումարն ավարտեց իր աշխատանքները:

Համագումարի մասնակիցներն ընդունեցին առաջիկա յոթ տարիների ԵՀԽ գործունեության ռազմավարությունը եւ ծրագիրը, հանդես եկան ընդհանուր ուղերձով: Համաժողովը կատարեց վեց հայտարարություն՝ առնչված Լատինական Ամերիկային, պաշտպանության պատասխանատվությանը, ՄԱԿ-ի վերափոխմանը, ջրի խնդիրներին, ահաբեկչությանը, մարդու իրավունքներին ու հակաահաբեկչությանը, ինչպես նաեւ միջուկային զենքերի վերացմանը:

Նախ ընտրվեցին ԵՀԽ ութ նախագահները, որոնք ներկայացնում են քրիստոնեական եկեղեցիների բոլոր ընտանիքները: Հին Արեւելյան եկեղեցիների ընտանիքից նախագահ ընտրվեց Եթովպիայի Ուղղափառ եկեղեցու պատրիարք Աբունա Պաուլոսը:

Նույն օրը գումարվեց նորընտիր կենտրոնական կոմիտեի անդրանիկ նիստը, որի ընթացքում ընտրվեցին ԵՀԽ-ի դիվանը եւ գործադիր վարչությունը: Որպես ԵՀԽ-ի ատենապետ ընտրվեց Բրազիլիայի Լյութերական եկեղեցու նախագահ դոկտ. Վալտեր Ալթման եպիսկոպոսը, փոխատենապետեր՝ Սասիմայի միտրոպոլիտ Գեննադիոսը (Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարքություն) եւ տիկ. Մարգարիտ Հանդրիկ-Ռայրիմասեն (Ինդոնեզիայի Մոլուկկասի բողոքական եկեղեցի): 20 անձանցից բաղկացած գործադիր վարչության մեջ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուց ընտրվեց գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը:

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնի*
*Միջեկեղեցական*
*հարաբերությունների բաժին*

## ԼՈՒՐԵՐ Հայաշխարհից

# Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանն այցելեց Իրանի Իսլամական Հանրապետություն

## Հինգ իրանահայ նոր երեխաներ համալրեցին Մարդասիրական ճեմարանի սաների շարքերը

Փետրվարի 21-28-ը Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանն այցելեց Իրանի Իսլամական Հանրապետություն՝ հանդիպելու ճեմարանում սովորող իրանահայ երեխաների ծնողների եւ հարազատների հետ: Հանդիպումների ընթացքում հայր սուրբը խոսեց յուրաքանչյուր երեխայի ուսումնական առաջադիմության ու վարքի մասին, անդրադարձավ ճեմարանի մոտակա ծրագրերին: Մեկ անգամ եւս Տ. Օշական վարդապետը շեշտեց, որ նոր ղեկավարության նպատակն է ունենալ կրթական բարձր մակարդակի դպրոց եւ բարվոք կենսապայմաններ՝ ակնկալելով ծնողների եւ հարազատների բարոյական աջակցությունը:

Պաշտոնական այցի ընթացքում հայր Օշականը հյուրընկալվեց նաեւ Իրանի Իսլամական Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Կարեն Նազարյանի կողմից՝ վերջինիս ներկայացնելով ճեմարանի արդի վիճակն ու ապագա ծրագրերը: Հայր սուրբը հանդիպեց նաեւ Իրանի խորհրդարանի երկու հայ պատգամավորների՝ Գեւորգ Վարդանի եւ Ռոբերտ Բեգլարյանի հետ:

Հանդիպումների ընթացքում Օշական վարդապետին ուղեկցում էր Իրանում Մարդասիրական ճեմարանի պաշտոնական ներկայացուցիչ տիար Արարատ Եղիկյանը:

Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը Կալկաթա վերադարձավ իրանահայ հինգ նոր սաներով, որոնք համալրեցին 185-ամյա պատմական կրթօջախի աշակերտության շարքերը:

*ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ*

# ԵԿԵՂԵՑԻ

*Սկիզբը՝ 2005-ի թիվ 11-12, 15-18, 20-22, 24, 2006-ի թիվ 1-4*

## ԾԻՍԱԿԱՆ

### ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

Ավագ երկուշաբթի օրը չորացած թզենու հիշատակն է: Քրիստոսն Իր գործունեությամբ բոլորին բուժում էր եւ կյանք պարգեւում, սակայն միայն մեկ անգամ նա Իր զորությունը հակառակը գործածեց եւ չորացրեց թզենին՝ ցույց տալու համար, որ Իր խոսքը կենդանարար է, Ինքն է կենդանացնում, բայց նաեւ դատում: Քրիստոսը չորացրեց կանաչ թզենին եւ բուժեց չորացած ձեռքը: Քանի որ մոտենում էին Իր չարչարանքները, Քրիստոսը թզենին չորացրեց, որպեսզի առաքյալները չմտածեին, թե Ինքն ուժերի թուլության պատճառով էր, որ չարչարանքների մատնվեց: Քրիստոսը թզենին չորացրեց նաեւ ցույց տալու համար, որ Իր գալստյամբ այլեւս պետք չեն թզենու տերեւները, որոնցով Ադամը ծածկում էր իր մերկությունը, եւ որոնք ծառայում էին իբրեւ ամոթի եւ խայտառակության ծածկոց:

**Քրիստոսը Երկնքի արքայությունը նմանեցրեց կույսերի:**

Երեքշաբթի օրը՝ երեկոյան ժամերգության ընթացքում, եկեղեցում ընթերցվում է 10 կույսերի առակը: Այդ ժամանակ 10 դպիրներ դուրս են գալիս եկեղեցու ատյան՝ վառվող մոմերով: Ավետարանական առակում 10 կույսերից հինգը կոչվում են հիմարներ, մերժվում Քրիստոսի կողմից եւ չեն կարողանում մտնել Երկնքի արքայություն: Եվ երբ ընթերցվում է այս հատվածը, հիմար կույսերին խորհրդանշողների մոմերը հանգցնում են: Բայց ո՞րն էր մերժման պատճառը. չէ՞ որ բոլորն էլ կույսեր էին, բոլորն էլ ճգնությամբ պահել էին առաքինությունը: Հիմար կույսերը բավականաչափ յուղ չունենալու պատճառով չկարողացան վառ պահել իրենց լապտերները եւ ուշացան: Յուղը խորհրդանշում է մարդասիրությունը եւ ողորմությունը, եւ հիմար կույսերը նրանք են, ովքեր առաքինություն ունենալով հանդերձ՝ ավելի շատ մտածում են երկրային բաների մասին եւ առաջին հերթին չեն աշխատում աստվածային կամքի իրագործման եւ Երկնքի արքայությանն արժանանալու համար:

**Ավագ չորեքշաբթին հիշատակն է Բեթանիայում կնոջ կողմից Քրիստոսի օծման:**

Ավագ Հինգշաբթի օրը հիշատակվում է Քրիստոսի կողմից Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատումը: Այս օրը մատուցվում է բաց Պատարագ: Քրիստոսը վերջին ընթրիքի ժամանակ հացն ու գինին տվեց ճաշակելու իր աշակերտներին՝ ասելով որ հացը Իր մարմինն է, իսկ գինին՝ Իր արյունը, որ հեղվում է մարդկանց մեղքերի քավության համար: Մերժելի եւ անընդունելի են աղանդավորական այն բոլոր տեսակետները, որոնց համաձայն հացն ու գինին պարզապես Քրիստոսի մարմնի եւ արյան խորհրդանիշ են: Այսպիսի պնդումները հակասում են հենց Քրիստոսի բառերին, Ով հաղորդության համար երբեք չօգտագործեց խորհրդանիշ բառը: **Քրիստոս նաեւ մեկ այլ տեղ ասաց, որ ով Իր մարմինն ու արյունը չճաշակի, նա երբեք հավիտենական կյանք չի ունենա:** Յուրաքանչյուր մկրտված քրիստոնյա եկեղեցական մեծ տոներին՝ տարվա ընթացքում 4 կամ 5 անգամ, պետք է հաղորդություն ստանա: Սակայն եթե դու այնպիսի մարդ ես, որ սիրտդ սառած է Աստծո հանդեպ, ապա գոնե տարին մեկ անգամ՝ Սուրբ Զատկի տոնին, պետք է հաղորդություն ստանաս եկեղեցում, որպեսզի ներքին էությամբ չդադարես քրիստոնյա լինելուց:

**Ավագ հինգշաբթի երեկոյան կատարվում է ոտնլվայի արարողությունը:**

Խորանի վրա բարձրաստիճան հոգեւորականը հանում է իր զգեստները, գոգնոց կապում եւ լվանում, յուղով օծում է 12 հոգու ոտքեր: Սա արվում է Քրիստոսի արարքի նմանողությամբ, երբ Քրիստոսը լվաց իր 12 աշակերտների ոտքերը՝ խոնարհության նշան ցույց տալով ու ասաց, թե՝ մի օրինակ տվի ձեզ, որ ինչպես Ես ձեզ արեցի, դուք էլ նույն ձեւով անեք:



**Ավագ ուրբաթը հիշատակն է Քրիստոսի չարչարանքների եւ խաչելության:**

Քանի որ, ըստ եկեղեցական օրենքի, երեկոյան ժամերգությունից հետո է օրը փոխվում, ապա չարչարանքներին նվիրված արարողությունը կատարվում է հինգշաբթի երեկոյան: Արարողության ընթացքում ընթերցվում են համապատասխան Ավետարաններ, իսկ խորանի վրա



վառվող 12 մոմերը խորհրդանշում են առաքյալներին: Երբ ընթերցվում են առաքյալների՝ Քրիստոսին լքելու մասին հատվածները, վառվող մոմերը հերթով հանգցնում են: Հուդային խորհրդանշող մոմը սեւ գույնի է լինում: Ավագ ուրբաթ օրը ծաղիկներից եւ մշտադալար ծառերի ճյուղերից պատրաստվում է Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը եւ երեկոյան ժամերգությունից հետո, ի հիշատակ Քրիստոսի թաղման, խորհրդանշական գերեզմանը հանդիսավոր թափորով եկեղեցուց դուրս է հանվում: Այն պտտեցնում են եկեղեցու շուրջը եւ երբ նորից եկեղեցի են բերում, հոգեւորականները, հավաքվելով գերեզմանի մոտ, երգում են *Խաչի Քո Քրիստոս* օրհներգը, այնուհետեւ բոլորը համբուրում են գերեզմանի վրա դրված խաչն ու Ավետարանը: Մարդիկ սովորաբար վախենում են մահից, սակայն Քրիստոսի մահով եւ հարությամբ արդեն մահը մեզ համար սարսափելի չէ, որովհետեւ մենք գիտենք հարության մասին: Այդ իսկ պատճառով ծաղկահյուս այս գերեզմանը ոչ թե մահ, այլ կյանք, հավիտենություն ու երանություն է ավետում:

**Ավագ շաբաթ օրը մատուցվում է ճրագալույցի, իսկ կիրակի օրը՝ Սուրբ Հարության հանդիսավոր Պատարագ:**

Տարեկան երկու անգամ՝ Սբ Ծննդյան եւ Սբ Հարության ճրագալույցի Պատարագից առաջ, եկեղեցիներում ընթերցվում է մեկ հատված Դանիելի մարգարեության երրորդ գլխից: Ընթերցվող հատվածը ներկայացնում է Նաբուգոդոնոսորի հրամանը՝ իր շինած կուռքին երկրպագելու, երիտասարդների հրաժարման եւ ճշմարիտ Աստծուն փառաբանելու մասին: Սարկավագներն այս ընթերցումն անում են սուրբ խորանից: Այդ ժամանակ խորանի վարագույրը փակ է լինում: Սարկավագները դուրս են գալիս վարագույրի ետեւից՝ ձեռքերին մոմեր պահած: Դանիելի մարգարեությունից ընթերցվող հատվածը գալարաձեւ թղթի վրա է գրված լինում: Կենտրոնում կանգնելով՝ սարկավագներն ի լուր ամենքի բարձրաձայն հնչեցնում են այս ընթերցվածքը: Գերության մեջ գտնվող երիտասարդներն իրենց անսասան հավատքի համար հալածվել են թագավորի կողմից: Նրանք գցվել են հրե հնոցի մեջ, Դանիելը նետվել է առյուծների գուբը, սակայն ամեն անգամ Աստված փրկել է նրանց: Երիտասարդների նետվելը հնոց եւ նրանց փրկվելը մի գեղեցիկ խորհրդանիշ ունեն: Հուրը մեղքերն են, երիտասարդները՝ մարդիկ, որոնց Քրիստոս Աստված փրկեց մեղքերից եւ կործանումից: Սա շեշտվում է նաեւ ամեն օր առավոտյան ժամերգության ժամանակ սարկավագի քարոզի մեջ, որտեղ նշվում է, թե Քրիստոսը «էջ ի բոց հնոցին եւ փրկեաց զերիս մանկունսն ի քաղդեացւոց անտի», այսինքն՝ Քրիստոսն իջավ հնոցի բոցի մեջ եւ երեք մանուկներին փրկեց քաղդեացիներից:

*Շարունակելի*

*Տ. Ադամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ

## (1066-1105)

*Սկիզբը՝ թիվ 4*

Մենք արդեն նշեցինք, որ հայոց կաթողիկոսը Կոստանդնուպոլսից մեկնեց Եգիպտոս, սակայն սկզբում կամեցավ գնալ Երուսաղեմ՝ թե՛ բարեպաշտական, թե՛ հոգեւոր կյանքին հետեւելու նպատակով եւ թե՛ նոր նյութեր հավաքելու խնդրով: Սակայն փոթորկի պատճառով Երուսաղեմ գնալը չհաջողվեց: Նավն ստիպված էր Յոպպեի նավահանգստի փոխարեն ուղեւորվել Ալեքսանդրիա, եւ Գրիգոր Վկայասերը կարողացավ իր փափագը կատարել եւ ճանապարհորդել մինչեւ Թեբայիդի անապատը (մենաստանը), որտեղ որոշ ժամանակ ճգնեց, ծանոթացավ նրանց կենցաղին ու ընտելացավ դրան, տեղեկություններ ու հրահանգներ հավաքեց հայ կրոնավորության մեջ դրանք արմատավորելու համար: Պատմությունը տեղեկություն է պահպանել այն մասին, որ նա, վախենալով տեղի ավազակներից, աղոթքով անձրեւ է առաջացրել, եւ քանի որ մինչ այդ Եգիպտոսում անձրեւ չէր եկել, նա այդ հրաշքի համար արժանանում է սուլթանի հատուկ հարգանքին եւ ընդունելությանը: Հավանաբար դա տեղի ունեցավ Աբդուլտամին-Մսթանսըր սուլթանի (1036-1094) օրոք, երբ նրա կառավարչության ներքո Եգիպտոսը բարգավաճեց, եւ հայ գաղթականները, որոնց թիվը հասավ, ըստ Ուռհայեցու, 30 հազարի, արժանացան լավ ընդունելության եւ հարգալիր վերաբերմունքի: Հույժ մեծարվելով սուլթանից եւ ձեռք բերելով նրա բարեհաճ վերաբերմունքը՝ հայոց կաթողիկոսն իր եղբորորդի Գրիգորիսին ձեռնադրեց եպիսկոպոս եւ կարգեց եգիպտահայության հոգեւոր հովիվ: Չնայած Վարդանը նրան համարում է եղբորորդի, սակայն Գրիգորը Ծովքի իշխանի եւ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի քրոջ որդին էր, ինչպես հավաստում է Ներսես Շնորհալին: Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրվելով՝ եգիպտահայությունը վերածվեց Հայոց Եկեղեցու թեմերից մեկի՝ կրելով հավանաբար պատրիարքական աթոռ անունը: Հանգամանք, որ հետագայում վկայված է, որ եգիպտական կառավարության կողմից Հայոց առաջնորդարանը կոչվել է պատրիարքարան: Գրիգոր եպիսկոպոսը մինչեւ իր կյանքի վերջը հովվապետեց Եգիպտոսի հայերին եւ այնտեղ էլ մահացավ: Այլ տեղեկություններ նրա մասին չեն պահպանվել:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ Գրիգոր Վկայասերն իր առջեւ խնդիր էր դրել այցելել Երուսաղեմ, պետք է ենթադրել, որ նրա հարկադրական ափ իջնելը փոթորկի պատճառով Ալեքսանդրիայում չխանգարեց նրան Եգիպտոսից հետո ուղեւորվել Երուսաղեմ, առավել եւս, որ սուրբ քաղաքը գտնվում էր Եգիպտոսի սուլթանի իշխանության ներքո: Հայոց տոմարով 521, այսինքն՝ 1072 թվին նա շուրջ հնգամյա ուղեւորությունից հետո վերադարձավ Ծամնդավ՝ հավանաբար ցամաքով՝ Կոմագենեի վրայով:

Գրիգոր Վկայասերի բացակայության շրջանում Գեորգ Լոռեցին անկաշկանդ վարում էր կաթողիկոսական գործերը, սակայն նրա գործունեության մասին առանձին հիշատակներ չեն պահպանվել: «Տեառն Գէորգայ Հայոց վերադիտողի եւ հոգեշնորհ փիլիսոփայի հաւատոյ գիրը», որ ուղղված էր Ասորվոց Հովհաննես պատրիարքին եւ սովորաբար վերագրվում էր Գեւորգ Գառնեցուն, ավելի ուշ ուսումնասիրողները կապեցին Գեորգ Լոռեցու հետ, քանի որ Հովհաննես Ասորվոց պատրիարքը չէր կարող լինել այլ ոք, եթե ոչ Բարշուշանը, որի՝ հայերին ուղղված նամակը հայտնաբերվեց, եւ այն բոլոր չափանիշներով համապատասխանում է Գեորգի հավատո գրի մեջ բարձրացրած խնդիրներին, ինչպիսիք են խորհրդի հացի խմորումը եւ համեմումը, խաչերի օծումը, զանգերի օրհնությունը, օրերի սկիզբը եւ Ծննդյան տոնը: Բարշուշանը հայոց սովորությունները համարել է ատելի եւ Եկեղեցու կանոններին հակառակ, իսկ Հայոց վերադիտողը, այլ խոսքով՝ Գեորգ Լոռեցին, հմտորեն պաշտպանել եւ ջատագովել է դրանք: Հավատո գրում Գեորգն իրեն կաթողիկոս չի կոչում, իրողություն, որ մեր կարծիքով՝ հավաստում է միայն նրա փոխանորդ լինելը: Կարելի է ենթադրել, որ նա, իրոք, եղել է կրթված անձնավորություն, Հայոց Եկեղեցուն վերաբերող հարցերում նախանձախնդիր դեմք, սակայն, երեւի, նույնը չի կարելի ասել նրա վարչական գործունեության եւ բարոյական հատկանիշների մասին:

1072 թ., երբ Գրիգոր Վկայասերը վերադարձավ Ծամնդավ, Գեորգ Լոռեցին պաշտոնազրկվեց: Նախորդ շարադրանքից արդեն պարզ էր, որ վերադարձած կաթողիկոսը ոչ մի կերպ չէր ընդունի նրա գործակցությունը՝ տեսնելով նրա երդմնազանցությունն ու խարդավանքները: Եվ եթե իր ուղեւորությունը հարվածի տակ չդնելու համար նա Գեորգ Լոռեցուն կամա թե ակամա ձեռնադրել էր, ապա վերադառնալուց հետո նա նրա կարիքը բոլորովին չուներ: Թերեւս իրավացի է Մ. Օրմանյանը, որ Գեորգ Լոռեցին, հավանաբար, հանդգնել է հախուռն ձեւով հանդես գալ Գրիգոր Վկայասերի դեմ՝ պահպանելու համար իր պաշտոնը, որը լոկ ավելի սրեց նրանց փոխհարաբերությունները: Գեորգ Լոռեցու գործունեությունն առանձնապես չէր եղել հայոց արքայիկների եւ իշխանների սրտով. ուստի Գրիգոր Վկայասերից առանձին ջանքեր չպահանջվեցին նրան պաշտոնազրկելու եւ կարգալույծ անելու համար: Եվ քանի որ Գեորգ Լոռեցին ընդամենը փոխանորդ էր, ապա եկեղեցական ժողով չգումարվեց: Ինչ վերաբերում է Գեորգ Լոռեցու հետագա ճակատագրին, ապա նա անցավ Տարսոն եւապավինեց տեղի հայ իշխան Աբլղարիբին, որ եղել էր Վասպուրականի դուքս եւ քինկ անեցի Վեստ Խաչիկի թոռն էր՝ Հասանի որդին: Հաստատվելով Կիլիկիայում՝ նա իր իշխանության տակ էր առել Մասիս, Ադանա քաղաքները, Պապեռոն եւ Լամբրոն ամրոցները: Տարսոնում հաստատված Գեորգ Լոռեցին, զրկված աստիճանից եւ քողից, օգտագործելով Աբլղարիբի անձնասիրությունն ու ազգային միասնական իշխանության բացակայությունը, փաստորեն կաթողիկոսական իշխանություն հաստատեց Տարսոնի եւ նրա շրջակայքի վրա: Այդ պատճառով էլ նա Սամվել Անեցու մոտ հիշատակվում է որպես արեւմտից կողմերի կաթողիկոս: Բայց Հայոց Եկեղեցու աչքում նա ընդամենը փոխանորդ էր եւ կաթողիկոսների ուղիղ շարքի մեջ չի մտել: Հասկանալի է, որ այդ պատճառով էլ Մ. Օրմանյանը նրան չի դասում օրինական կաթողիկոսների շարքը, սակայն թվագրում է նրան որպես Գեորգ Գ Բյուրականցուց եւ Գառնեցուց հետո:

Գրիգոր Վկայասերը Ծամնդավ վերադարձավ որպես կատարյալ փոփոխություն կրած գործիչ: Գեորգ Լոռեցուն վտարելուց հետո նա իր ձեռքը վերցրեց հայրապետանոցի գործերը եւ տիրապես վարեց կաթողիկոսական պաշտոնը: Մ. Ուռհայեցու խոսքով՝ նա գալիս բնակվում է Մուտառասուն կոչվող վայրում, որը Գուրգենի որդի Գագիկին էր պատկանում: Խնդիրն այն է, որ հայտնի չեն ո՛չ Մուտառասունը եւ ո՛չ էլ Գագիկ Գուրգենյանը, որը կարող լիներ հովանավորել կաթողիկոսին: Այդ ժամանակ որպես բարեպաշտական դեմքեր հայտնի էին Գագիկ Աբասյանը եւ Գագիկ Աշոտյանը, որոնցից առաջինի արքունիքը Ծամնդավն էր, իսկ երկրորդինը՝ Պիզուն: Սրանցից Գագիկ Աբասյանն էր, որ Վկայասերի պաշտպանն էր, ուստի հաշվի առնելով այն իրողությունը, որ գոնե սկզբում կաթողիկոսը հաստատվել էր Ծամնդավում, պետք է ենթադրել, որ շփոթվել է Գագիկի հոր անունը, իսկ Մուտառասունը գտնվել է Գագիկ Աբասյանի տիրույթներում: Չի բացառվում, որ Մուտառասունի վանքը կառուցել էր հենց Գագիկ Աբասյանը՝ որպես կաթողիկոսանիստ հազուրդ տալու համար իր փառասիրությանը: Չնայած Սամվել Անեցին Գագիկ Աբասյանի մահը դնում է 1069-ին, սակայն այլ աղբյուրներից դատելով՝ նա իշխել է 52 տարի, որով նրա մահն ընկնում է 1081 թվին: Հետեւաբար տարակույս չկա, որ հենց Գագիկ Աբասյանն էր կրկին ընդունել Գրիգոր Վկայասեր կաթողիկոսին, որը շարունակեց իր բարգմանչական գործունեությունը: Այդ գործերում նրան աջակցել են Կիրակոս եւ Մատթեոս վարդապետները, որոնք, Մ. Օրմանյանի կարծիքով, հավանաբար, եղել են նաեւ հայրապետանոցի գործերում նրա օգնականները:

*Շարունակությունը՝ էջ 4*



## ԳԵւՈՐԳ Զ. ՉՈՐԵՔՉՅԱՆ

**Կաթողիկոս Ամենայն Հայոց (ծն. 1868, կթղ. 1945-1954)**

# ԱՆՑԵԱԼՆ ու ՆԵՐԿԱՆ

## (Մբ Վարդանանց փօն)

*Սկիզբը՝ թիվ 4*

Այսպես էին ահա մեր նախնիքը:

Իւրաքանչիւր մարդ, իւրաքանչիւր ազգ պիտի ունենայ կեանքի կենտրոն, առաջնորդող գաղափար, ինչը, տեսնում էք, մեր նախնիքը ունեցել են. հայրենիքն ու Եկեղեցին է եղել նրանց կեանքի կենտրոնը:

Ես հարցնում եմ մեզ՝ ներկայի հայերիս. ո՞րն է մեր առաջնորդող գաղափարը: Փոխուել է կեանքը, գուցէ պէտք է փոխել նաեւ առաջնորդող գաղափարը. գուցէ հնացել են մեր նախնեաց իդէալները, եկէք ուրեմն փոխենք եւ մեր կեանքի նոր յենարաններ, նոր կենտրոններ ընտրենք այս ամէն ինչ կլանող աշխարհին կուլ չերթալու եւ մինչեւ ծուծը անբարոյականացած կեանքին զոհ չլինելու համար:

Ամէն օր լսում ենք, թէ կեանքի նպատակը առաջադիմութիւնն է. ասացէ՛ք խնդրեմ, ի՞նչ ենք անում մենք՝ հայերս, գոնէ մեր ազգային կեանքի յառաջադիմութեան համար: Ամէն օր գոչում ենք, թէ ներկայի բարոյական գաղափարները անբաւարար են. ի՞նչ ենք անում մենք բարձրացնելու եւ առողջացնելու համար գոնէ մեր բարոյական կեանքը:



Կ'ուզէ՞ք իմանալ, լսեցէ՛ք. անցեալում մենք նահատակուեցանք այն գաղափարների եւ հաստատութիւնների համար, որոնք մեր կեանքի, մեր գոյութեան հիմունքներն էին, իսկ այսօր մե՛նք ենք նահատակում մեր կեանքի աղբիւրները:

Մի՞թէ նահատակ չես դու, Հա՛յ Եկեղեցի, քանի որ քեզնով օր ու արեւ տեսած զաւակներդ այսօր վատ երախտամոռութեամբ երես են դարձնում քեզնից՝ որպէս ծերացած մօրից, եւ մինչեւ իսկ մահդ են ցանկանում:

Մի՞թէ նահատակ չես դու, հա՛յ դպրոց, որ աղքատի տոպրակը շալկած՝ շրջում ես մուրացիկի նման, օրական հացով ապրում ու պատսպարում քո աղքատիկ զաւակներին:

Մի՞թէ նահատակ չես դու, հա՛յ ընտանիք, քանի որ անդամներդ երես են դարձնում հարազատներից եւ գրկաբաց ընդունում օտարներին՝ մեռցնելով ամէն ազգային աւանդութիւններ ու սովորութիւններ, առանց որի կարող չէ մի ազգ, այն էլ մեզ նման փոքրիկ, ցրուած հպատակ ազգ, ինքնուրոյն ապրել:

Մի՞թէ նահատակ չես դու, հայ անուշի՛կ լեզու, շատ ընտանիքներից հալածուած ու վտարուած մայրենի՛ բարբառ: Ո՞վ այսօր քեզնից երես չի դարձնում՝ դպրոցի աշակերտուհի՞ն, թէ աշակերտը, հայ օրիո՞րդը, թէ հայ երիտասարդը, թէ հայ ծնողը. ամէնքն էլ երես են շրջում քեզնից: Մէկին ատելի ես, որովհետեւ անիծեալ մամոնայ ձեռք բերելու չես նպաստում, միւսին՝ որովհետեւ տարփածուի լեզուն այլ է, երրորդին՝ որովհետեւ մեղկ է եւ ծոյլ, իսկ դու այն փոքրիկ թղթի կտորը զլանում ես տալ դիւրութեամբ, որ բաց է անում առաջդ համալսարանի դռները ապագայ հանգիստ կեանքի համար: Ահա՛ մեր պատկերը: Ասացէ՛ք խնդրեմ, մի՞թէ հնացած էք համարում մեր նախնեաց պաշտած հայրենիքի եւ Եկեղեցու գաղափարները. եթէ նոքա հնացել են, միթէ հնացել է նաեւ անձնուիրութեա՞ն գաղափարը, որ վեհ սրտերի հարազատ ծնունդ է եւ կը մնայ, առանց որի ո՛չ կեանք կայ եւ ո՛չ յառաջադիմութիւն, ո՛ր միայն ընդունակ է մարդուն աշխարհից վերացնել եւ պաշտամունքի առարկայ դարձնել:

Գիտե՛մ, չէք բողոքի դրա դէմ, եւ այդ ոգին է, որ ձեզ ժողովել է այստեղ: Բայց ո՞րտեղից սպասենք այդ ոգին՝ հայկական անձնուէր ոգին, քանի որ յարմարութիւնների գերի ոսկու սպասաւոր արդի հայը, իւր բոլոր խաւերով, փախչում է հայ գրականութիւնից եւ հայ դպրոցից՝ հայ ոգու երկու մեծ ջերմոցներից: Ո՛չ հայ քահանայի, ո՛չ հայ ուսուցչի, ո՛չ հայ բժշկի, ո՛չ հայ փաստաբանի, ո՛չ հայ հարուստի, ո՛չ հայ գործակատարի, ո՛չ էլ հայ գիւղացու որդին է յաճախում հայ դպրոց. հայ դպրոցը յաճախում է միայն հայ աղքատը, այն էլ աղքատութիւնից ստիպուած:

Այս չէ՛ ուղին կեանքի ու փառքի. եթէ ապրել կ'ուզէք եւ պատուո՛վ ապրել, եկէ՛ք, եղբայրներ, գլուխ խոնարհենք մեր նախնեաց հերոս սրտի եւ անձնուէր ոգու առաջ. թող նոցա հոգիները բարեխօս լինին Բարձրեալի առաջ՝ զօրացնելու մեր կամքը դէպի ազնիւը, դէպի վեհը, դէպի յաւիտենականը: Որովհետեւ այժմ, երբ հայը շնորհիւ Մեծ Ռուսաստանի ստանում է կեանքի եւ գոյքի ապահովութիւն եւ խաղաղ զարգանալու իրաւունք, շատ աւելի կարեւոր է անձնուէր ոգի, որպէսզի կարողանանք իբրեւ ազգ ապրել եւ մարդկային մեծ ընտանիքին օգտակար անդամ դառնալ՝ մխիթարելով եւ պարզերես անելով մեր պաշտպան բարեկամներին եւ ամօթահար՝ մեր թշնամիներին: Ամէն:

*13 փետրվար, 1914թ.*

# ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅ ԳԻՐԸ



Սկիզբը՝ թիվ 4

Հին աղբյուրների մեր քննությունը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Մեսրոպ Մաշտոցն ինքն է տարիներ շարունակ որոնել նախաքրիստոնեական հայ գիրը: Հետազոտողների մի մասը (Հր. Աճառյան, Էդ. Աղայան եւ ուրիշներ) դեմ են արտահայտվում նախամաշտոցյան հայ գրի գոյությանը: Մյուսները, այդ թվում՝ հաջորդ սերնդի ուսումնասիրողները, հետզհետե ավելի վստահ են արտահայտվում նախամաշտոցյան գրի օգտին՝ գտնելով, որ հայոց գիրը վերացել կամ մոռացության է տրվել մեհենական պաշտամունքի գրքերի եւ հեթանոսական մատյանների հետ միասին՝ քրիստոնեություն ընդունելու ժամանակ, որը տարածվում էր ոչ միայն քարոզչությամբ, այլ նաեւ զինված դիմադրության պայմաններում, ինչպես վկայում են Զենոբ Ասորին, Ագաթանգեղոսը եւ հենց Մովսես Խորենացին: Արծան քրմապետի եւ նրա քրմական զորքի օրհասական առաջին պատերազմը *(Զենոբ Ասորի, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889, էջ 31-39)* ցույց է տալիս, որ քրմերը կատաղի դիմադրել են նոր հավատին եւ կամովին չեն բացել իրենց մեհյանների դռները քրիստոնեական խաչի առջեւ: Իբրեւ նախամաշտոցյան հայերեն գրի ոչնչացման լավագույն փաստարկ կարող է ծառայել Ագաթանգեղոսի այն վկայությունը, որ քրիստոնեության առաջին հարվածն ուղղված է եղել Վաղարշապատից Արտաշատ տանող ճանապարհին գտնված գրի եւ գրչության Տիր աստծո տաճարի դեմ՝ քրմերի դպրության մեհյանի, որտեղ բազմացվում էին հեթանոսական քրմական գրքեր, եւ կար նաեւ գրադարան (դիվան). «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթեալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, եւ որ յեբազմոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին» *(Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, Քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի եւ Ս. Կանայանցի, Տփղիս, 1909 (այսուհետեւ՝ Ագաթ.), § 778):* Սակայն այս պերճախոս փաստը վկայակոչող նախամաշտոցյան գրի կողմնակիցները հաշվի չեն առնում մի շատ կարեւոր հանգամանք: Սասանյան I արքայից արքա Արտաշիրը (224-241) եւ նրա որդի Շապուհ I-ը (241-272), ի հակակշիռ տապալված Պարթեւ Արշակունիների հելլենասիրության, Իրանի հսկայածավալ տերության տարածքում վերականգնեցին Աքեմենյան շրջանի Զրադաշտ մոգի կրոնը՝ կրակապաշտությունը: Հատկապես 244/5 թվերին Հռոմի դեմ Շապուհ I-ի տարած փառահեղ հաղթանակից հետո զրադաշտականությունը հաղթարշավով անցավ Իրանով մեկ եւ տարածվեց արքայից արքային հպատակ երկրներում՝ Կարտիր մոգպետի մոլեռանդ վարդապետությամբ: Խոսրով Մեծի (Տրդատ II-ի) դավադիր սպանությունից հետո Հայաստանում Արտաշիր Սասանյանի տիրապետության տարիներին եւ նրան հաջորդած ժամանակաշրջանում, որ Մովսես Խորենացին անվանում է «անիշխանության 27 տարի», Հայաստանում մեհենական պաշտամունքը հետզհետե տեղի տվեց կրակապաշտության առաջ: Պատմահոր վկայությամբ՝ Արտաշիրը հրամայում է «զհուրն որմզդական որ ի վերայ բագնին որ ի Բագաւան, անշէջ լուցանել», այլեւ փշրում է հայոց հեթանոսական պաշտամունքի արձանները, որ շինել էր Վաղարշակ Պարթեւ թագավորը՝ արեգակի եւ լուսնի պատկերների հետ միասին *(Խոր., Բ. ՀԷ, էջ 216)*:

Կրակապաշտությունը Հայաստանում է՛լ ավելի տարածվեց Շապուհ I-ի որդի Որմիզդ-Արտաշիրի օրոք, որը Տրդատ Գ-ից առաջ թագավորում էր Հայաստանում 264-272 թթ.: Դավիթ Հռովմայեցին, նկարագրելով Հռիփսիմյան կույսերի գալուստը Հայաստան մոտ 300 թվին, պատմում է, թե կրակապաշտության ինչ սոսկալի ապարողության ականատես եղան նրանք Արեւելյան Տիգրիսի ակունքների մոտ՝ Վանա ծովից արեւելք, Անձեւացյաց գավառում, որտեղ նրանց հանդիպեց մի նոր կրակատուն, ատրուշան՝ «տուն կրակի, անձաց հրոյ, անդադար այրման աստուածոցն» *(Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց - Մատենագրութիւնք Մովսիսի Խորենացւոյ, Վենետիկ, 1865, էջ 301-302): Կրակապաշտ դեւերը որոտաձայն թմբկահարությամբ սրբազան արարողության էին հրավիրում շրջակա բնակիչներին եւ կրակի մեջ շիկացած քարերը հորդաբուխ աղբյուրը գլորելով՝ բարձրացող թանձր շոգիով սարսափ էին տարածում. կույս ու պատանի էին զոհում քարե վիշապներին եւ նրանց արյամբ զվարճանում: Հետաքրքիր է նշել, որ նույն Անձեւացյաց աշխարհի նկարագրությունը Մ. Խորենացին տալիս է Բարթողոմեոս առաքյալի Հայաստան գալու առիթով (մ. թ. I դարի առաջին կեսին), բայց այստեղ չեն հիշատակվում ո՛չ «տուն կրակի», ո՛չ էլ աստվածների պատվին «անդադար այրման» արարողությունը (տե՛ս Մ. Խորենացի, Պատասխանի թղթոյն Սահակայ [Արծրունւոյ] «Մատենագրութիւնք», էջ 294-295): Այս հանգամանքը գալիս է հաստատելու, որ Սասանյանների տիրապետությունից առաջ Հայաստանում կրակապաշտությունը տարածված չի եղել որպես կրոն)*, ինչպիսին բազմիցս հիշատակվում է Շապուհ I-ի «Քաաբա ի Զարդուշտ»-ի (Զրադաշտի ժայռի) 262 թվի եռալեզու արձանագրության մեջ - atrv Vrxran - «ատուր Վա՛րահրան» *(Martin Sprengling. Third century - Yran. Sapor and Kartir. Chicago, 1953, Shahpuhr KZ, Parthian, line 17, p. 8)*, որ Եղիշեն թարգմանում է ճշգրիտ՝ «Վռամական կրակ» *(Եղիշէի Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երեւան, 1957, էջ 70. «հրաման ունիմք ի գեօղս եւ ի քաղաքս շինել ատրուշանս, եւ զվռամական կրակն ի ներքս դնել»)*: Ահա թե ինչու Գրիգոր Լուսավորիչն իր յոթնօրյա վարդապետության մեջ, ի թիվս այլ մեղքերի եւ անօրինությունների, դատապարտում է մեր նախնիների մոխրապաշտությունը. «Այլ, Տէր, խառնեա զմեզ ի թիւ արդարոց քոց վասն մարդասիրութեան քոյ, որ ոչ թողեր զմեզ ընդ վայր ի մեղս հարցն մերոց եւ ի մոխրապաշտութեան նախնեաց մերոց եւ յանօրէնութիւնս առաջնոցն մերոց» *(Ագաթ. § 89)* :

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ

## (1066-1105)

Սկիզբը՝ էջ 3

Գրիգոր Վկայասերը, ինչպես հաղորդում է Մատթեոս Ուռհայեցին, ուղեւորություն է կատարում նաեւ Հայաստան, որտեղ դեռ կենդանի էր նրա մայրը: Գրիգոր Մագիստրոսը, հանձնելով կայսրին իր ժառանգական տիրույթ Բջնին, փոխարենը կալվածներ է ստացել Տարոնում, եւ այդ պատճառով դժվար է ասել, թե նրա մայրը Տարոնո՞ւմ էր գտնվում, թե՞ ամուսնու մահից հետո վերադարձել էր իր նախնիների երկիրը: Այսպես թե այնպես նա այցի եկավ Անի մայրաքաղաք եւ կարգադրեց տեղի հոգեւոր գործերը: Նրա քեռորդին՝ Վասակ Ապիրատյանի որդի Բարսեղը, նրա կողմից ձեռնադրվեց եպիսկոպոս եւ կաթողիկոսական



փոխանորդ, բայց դեռեւս ոչ իբրեւ կաթողիկոս կամ աթոռակից: Ստանալով Անիի եպիսկոպոսությունը՝ Բարսեղը սկսեց կոչվել Անեցի:

Հիշյալ ժամանակներում Անին այլեւս կայսրությանը չէր պատկանում, եւ կայսրների դրած արգելքը՝ կաթողիկոսների Անի գնալու վերաբերյալ, ի զորու չէր: Կաթողիկոսի Անի այցելելու ժամանակներում Անիի կառավարիչն էր Ֆադլը կամ Փաթլունը, որը Շադդադյան ամիրայի եւ նրա տիկին Մամի երեք զավակներից կրտսերն էր: Սրանք ժամանակին Փառիսոսի իշխան Գրիգորին պատանդ էին տվել իրենց մորը՝ փոխարենը ստանալով Շոթս եւ Շամիրամ բերդերը, եւ այնուհետեւ Գանձակի ամիրա Խլազիզին սպանելով՝ տիրացել էին նրա երկրին: Մահանում է եղբայրներից ավագը՝ Պարդվանը, եւ նրան հաջորդում է միջնակ եղբայր Լաշքարին, որին հաջողվում է իր տիրույթներին միացնել Շամքորը եւ Պարտավը, սակայն Փաթլունը սպանում է իր եղբորը եւ տիրանում իշխանությանը: Նա այնուհետեւ ընդարձակեց էլ ավելի իր իշխանությունը՝ ի հաշիվ հարեւան իշխանությունների: Ամեն մի երախտագիտություն մի կողմ թողնելով՝ նա նենգորեն ձերբակալեց իրենց ապաստան տված Փառիսոսի իշխան Գրիգորի որդի Փիլիպեին՝ որպես փրկագին վերցնելով Շաշվազ բերդը, սպանելով Գագիկ Համամյանին՝ տիրացավ Տանձիքին եւ այնուհետեւ գրավեց Դվինը: Նրա նվաճումների մեջ պետք է արձանագրել Սյունյաց Սենեքերիմի սպանությունն ու նրա երկրի գրավումը՝ Վասակ Պահլավունու որդու՝ Գրիգորի օգնությամբ հայոց տոմարի 521 եւ 525 թթ. միջոցին: Ծառայություններ մատուցելով Ալփասլանին եւ տալով մեծ նվերներ՝ Փաթլունը ստացավ Անի քաղաքը, որի կառավարչությունը նա հանձնեց իր երիտասարդ որդի Մանուչեին: Կամենալով ամրապնդել իր իշխանությունը քաղաքում՝ նա քաղաքի ամրություններն ու պարիսպները վերանորոգեց եւ Անի բերեց եւ պատիվներ ընծայեց Գրիգոր Պահլավունուն, որը Վկայասեր կաթողիկոսի քեռորդին էր, եւ այլ բազմաթիվ իշխանների: Քաղաքն այս ամենի հետեւանքով տնտեսապես սկսեց բարձրանալ, եւ հենց այդ ժամանակներում էր, որ Գրիգոր Վկայասերը եկավ Անի ու Գրիգոր Պահլավունու եղբայր Բարսեղին ձեռնադրեց Անիի եպիսկոպոս: Կաթողիկոսը, սակայն, Անիում չհաստատվեց եւ վերադարձավ Կիլիկիայի կողմերը, սկսեց բարեկարգել Սեւ լեռների վանքերը՝ համաձայն այն կանոնների, որ նա տեսել էր Կոստանդնուպոլսի, Եգիպտոսի եւ Երուսաղեմի վանքերում: Այս ամենը տեւեց չորս տարի՝ մինչեւ 1076 թվականը, երբ Հոնիում կաթողիկոս դարձավ Սարգիսը:



Գրիգոր Վկայասերի հայրապետության տարիներին գնալով թուլանում էր Բյուզանդական կայսրությունը, եւ ընդհակառակը՝ ուժեղանում էին սելջուկ թուրքերը: 1067 թվին մահացավ Կոստանդին ԺԱ Դուկիծ կայսրը՝ թողնելով մի անչափահաս զավակ՝ Միքայել Է Պարապինոսին, որի անունից շուրջ մեկ տարի երկիրը կառավարեց Եվդոքսիա թագուհին: Սակայն վերջինս սիրահարվեց Ռոմանոս Դիոգենես զորավարին, ամուսնացավ նրա հետ եւ 1068 թվին նրան կայսր հռչակեց՝ Ռոմանոս Դ անունով: Մինչ այս դեպքերը կատարվում էին, Ալփասլանը սելջուկյան զորքերով ավերածության մատնեց կայսրության արեւելյան երկրամասերը: Ռոմանոս Դ կայսրը 1069 թվին արշավանք ձեռնարկեց եւ բավական հաջողություններ ունեցավ, սակայն գործն ավարտել չկարողացավ, քանի որ Եվդոքսիան պահանջում էր, որ նա իր մոտ վերադառնա: Կայսրը մի նոր արշավանք կազմակերպեց երկու տարի անց, սակայն իր կենսակերպով ու գործելակերպով, բառիս իսկական իմաստով, զզվեցրել էր իր յուրայիններին, որոնք էլ նրան թշնամու հանձնեցին: Ալփասլանը հաշտություն առաջարկեց դեռ մինչեւ Մանազկերտի ճակատամարտը, սակայն մերժում ստացավ: Ճակատամարտում կայսրը, լքվելով իր յուրայիններից, գերի ընկավ, սակայն Ալփասլանը, խաղաղության խոստում ստանալով եւ փրկագին վերցնելով, նրան ազատ արձակեց: Եվ երբ Մանազկերտյան աղետից հետո նա ետ էր վերադառնում, բյուզանդացիները գահ բարձրացրին Միքայել Պարապինոսին, եւ Դիոգենես Դ-ն, փաստի առաջ հայտնվելով, ստիպված էր կամովին վանք մտնել, սակայն Միքայել կայսեր հրամանով նրան կուրացրին, եւ նա վանքում մահացավ 1071 թվին: Ալփասլանը, Աբասյան խալիֆայության անունից իշխելով, էլ ավելի հզորացրեց սելջուկյան տերությունը՝ գրավելով ոչ միայն Միջագետքը, Հայաստանը եւ Ասորիքը, այլեւ Արաբիան:

*Շարունակելի*

**Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ՝
## ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ՀԱՅԱՑՔՈՎ



Գործ՝ Հ. Ռուխկյանի

*Սկիզբը՝ թիվ 4*

Իր գործունեության տարբեր փուլերում այդ սկզբունքները կիրառած, թիֆլիսեցի լինելով՝ Թիֆլիսի բարբառին ու վրացերենին, երեք տարի Պարսկաստանում լինելով՝ պարսկերենին, Սայաթ-Նովայի գործած մյուս լեզուներին ու բարբառներին ամբողջությամբ կամ մասամբ տիրապետող, Թիֆլիսն ու նրա բարքերը, նրա առանձնահատուկ գույները, ցեղային ու մարդկային հարաբերությունները գեղագետ-քննադատի աչքով դիտող Ն. Աղբալյանին, այսպիսով, վիճակված էր մի կարեւոր պատմական առաքելություն՝ բացահայտել հանճարեղ աշուղ-բանաստեղծի խաղերի կենսական ակունքները, մեծ տաղասացի ներքին հոգեկան պոռթկումներն ու տվայտանքները, նրա միջավայրի ու ժամանակի խոր իմացությամբ բնութագրել այդ հզոր անհատականության բարձր արվեստի յուրահատկությունները, նաեւ առաջարկել Գ. Ախվերդյանի ու Ռ. Աբրահամյանի հրատարակություններում տեղ գտած սխալների, վրիպակների, տարընթերցումների, բառերի ու մասնիկների անջատ կամ միասին գրության, գրադարձության եւ կետադրական սխալների, տաղաչափական թերությունների ընդունելի ուղղումներ, որոնցով իմաստավորվում են սայաթնովյան խաղերի բառերն ու պատկերները:

Ն. Աղբալյանը ջանասիրաբար կազմել է նաեւ սայաթնովյան համաբարբառ, խաղերի բառարան, ուր օտար բառերը բացատրված են ոչ միայն փոխատու լեզվում ունեցած իրենց բառարանային իմաստներով, այլեւ Թիֆլիսի բարբառում եւ տվյալ բանաստեղծության տողում կամ բառական միջավայրում գործածված նշանակություններով: Հենց այս է, որ Ն. Աղբալյանի սայաթնովագիտությունը դարձրել է հմուտ մասնագետի վստահելի խոսք: Ահա այս առիթով ինչ է գրում ինքը՝ Ն. Աղբալյանը. «Ես ծնած ու մեծցած եմ նույն այն քաղաքի - Թիֆլիս - եւ նույն այն թաղի մեջ - Հավլաբար, ուր ծնած եւ ապրած է Սայաթ-Նովան: Իր մահն իմ ծնունդեն բաժանում է ութսուն տարի, բայց իմ մանկության շրջանին Թիֆլիսը դեռ պահում էր շատ հին հետքեր անցյալ շրջանից եւ իմ տեսած նիստ ու կացը շատ չէր հեռացած արքայական շրջանի Թիֆլիսի կյանքից» ***(Նույն տեղում, էջ 17: Ավանդույթի ուժով՝ Սայաթ-Նովան համարվել է թիֆլիսեցի: Ուշ է բացահայտվել նրա՝ Նախիջեւանում՝ Ագուլիսի մոտ գտնվող Հանդ կամ Դաշտ գյուղում ծնված լինելը եւ հետո Թիֆլիս փոխադրվելը: Այս պատճառով է Ն. Աղբալյանը նրան համարում իր հետ Թիֆլիսի նույն թաղում՝ Հավլաբարում ծնված)***:

Այնուհետեւ, հիշելով իր մանկությունն ու իրենց թաղի կանանց հավաքները, ուր երգում ու քամանչա էր նվագում հավլաբարցի միջահասակ Քոռ Մային, ավելացնում է. «Վեց-յոթ տարեկան տղաները մարդահաշվի չէին, ուստի մայրերը նրանց տանում էին հետները այդ հավաքույթներին, ուր երգում էին եւ Սայաթ-Նովայի երգերը, որ մանուկ տարիքից մնացին հիշողությանս մեջ՝ թե՛ բառը, թե՛ եղանակը» (նույն տեղում, էջ 19):

Սայաթնովյան ***բառն*** ու ***եղանակը*** փաստորեն Ն. Աղբալյանին արվեստի աշխարհի հետ կապող, նրա գեղագիտական ճաշակը ձեւավորող առաջին ազդակներն են եղել եւ նրան ուղեկցել են մինչեւ վերջ: Այո՛, միջավայրի, բանաստեղծի «հոգու ներքին կազմի» խոր ճանաչողությունը, հայերենի, մանավանդ աշուղական բանաստեղծության տաղաչափության ու անհրաժեշտ լեզուների իմացությունը, Աղբալյան գրականագետի մյուս որակներին գումարվելով, կատարել են վճռական դեր: Նա քաջածանոթ է եղել Գ. Ախվերդյանի աշխատասիրած «Սայաթ-Նովա» մոնոկոյան 1852 թ. առաջին հրատարակությանը՝ Մկրտիչ Էմինի սրբագրումներով, ուր Ախվերդյանը, «Թիֆլիզու բարբառի մի քանի յուրահատկություններու վրա» խորագրով լեզվաբանական ուսումնասիրության հետ միասին, տվել է սայաթնովյան խաղերի առաջին բացատրությունները ու համառոտ ծանոթագրումները՝ այդպիսով մեզանում հիմնադրելով ոչ միայն սայաթնովագիտությունը, այլեւ աշուղագիտությունն առհասարակ:

1914-24 թթ. իր հոդվածներն ու դասախոսությունները Ն. Աղբալյանն ստեղծել է այդ հրատարակության վրա հիմնվելով: Սակայն 1944-47 թթ. իր ուսումնասիրությունները կատարելիս կամ դասախոսությունները պատրաստելիս, ինչպես ինքն է ցավով նշում, ձեռքի տակ չի ունեցել Գ. Ախվերդյանի հրատարակությունը:

Մենք հնարավորություն չունենք անդրադառնալու Աղբալյան սայաթնովագետի գրականագիտական ու լեզվաբանական բոլոր մեկնաբանություններին ու նկատողություններին: Այդ մեկնաբանումներն անշո՛ւշտ կարեւոր են եւ պահանջում են ջանադիր ու համակողմանի ուսումնասիրություն, բայց բանասիրական գիտության համար պակաս կարեւոր չէ եւ այն, թե ինչպես է Ն. Աղբալյանը խորացել երգչի մարդկային նկարագրի ու կենսակերպի, աշխարհընկալման, նրա խաղերում արտացոլված իրականության ու ժամանակի պատկերման արվեստի գաղտնիքների մեջ:

Երկու դեպքում էլ իրենց խոսքն են ասել Ն. Աղբալյանի վերոհիշյալ առավելությունները, բայց եթե առաջին դեպքում զգալի է նրա լեզվական իմացությունների, մթնոլորտի ու միջավայրի գուներանգների խոր ճանաչողությունը, ապա երկրորդ դեպքում գերազանցություն ունի գեղագետ-քննադատը, որի նկատողությունները դառնում են «մեծ բեզարածի» ստեղծագործական խառնվածքի, նրա բանաստեղծական մտածողության յուրահատկությունների, պատկերի մեջ խտացված բովանդակության ու կենսափիլիսոփայության խոր ու համոզիչ բացահայտումներ: Մենք պիտի բավարարվենք սայաթնովյան խաղերից մի քանիսի աղբալյանական մեկնությունների ու դիտողությունների քննությամբ՝ ամբողջը վերլուծելու պարտավորությունը թողնելով հետագային:

* * *

Պատշաճորեն գնահատելով Ռ. Աբրահամյանի եւ մանավանդ Գ. Ախվերդյանի գործը՝ Ն. Աղբալյանը նրանցում այնուամենայնիվ տեսել է որոշակի պակասություններ, որոնք ջանացել է լրացնել իր բացատրություններով ու մեկնություններով՝ թիֆլիսի բարբառին չտիրապետող լայն հանրությանը Սայաթ-Նովայի ստեղծագործությունը մատչելի դարձնելու նպատակով. «Եվ արդեն հետազոտություն չէ, որ պետք է գրեմ,- խոստովանում է նա,- այլ գիտուններին նյութ, իսկ սովական ընթերցողին դյուրություն պիտի տամ Սայաթ-Նովայի երգերը լավ հասկանալու եւ, եթե հաջողիմ՝ խորապես ներապրելու» (նույն տեղում, էջ 22):

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՏԻՐՈՋ ԱՆՎԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Այս հոդվածում պիտի խոսվի մի լեզվական խնդրի մասին, որն առաջացել է եկեղեցական շրջանակում Տիրոջ անվան *(Հիսուս Քրիստոս)*՝ անորոշ ուղղականով գործածության պատճառով:

Հայտնի է, որ արեւելահայերենում բոլոր հատուկ անուններն ուղղականում պետք է որոշիչ հոդ ստանան, եւ սա գրական լեզվի կանոն է, որը բխում է ժողովրդի բնական խոսքից: Սակայն Տիրոջ անվան՝ անորոշ ուղղականով գործածության կողմնակիցները սրա համար երկու պատճառ են նշում՝ 1) այս անվան գրաբարյան գործածությունը, եւ 2) այն, որ այլ անունների հոլովումից տարբեր այս հոլովմամբ առանձնացնելով Տիրոջ անունը՝ ասես պատիվ ենք ընծայում դրան:

Առաջին պատճառաբանության առնչությամբ միանգամից հարկ է նշել, որ գրաբարը Տիրոջ անվան ուղղականի <u>առանձնահատուկ ձեւ չունի</u>. գրաբարում, ինչպես նաեւ գրական արեւմտահայերենում եւ ուրիշ շատ լեզուներում <u>բոլո՛ր</u> հատուկ անուններն են անորոշ ուղղականով գործածվում: Ուստի այս լեզուներում կա մեկ ընդհանուր օրենք բոլոր հատուկ անունների հոլովման համար, առանց բացառության: Մինչդեռ արեւելահայերենը մեկն է այն լեզուներից, որոնցում հատուկ անունները որոշիչ հոդ ստանում են: Այսպիսին է, օրինակ, հենց Ավետարանի գրության լեզուն՝ հունարենը, կամ մեկ այլ հին լեզու՝ ղպտերենը, որոնք բնավ չեն խորշում Տիրոջ անունը որոշիչ հոդով գործածելուց եւ այսպիսով այն գործածում են այնպես, ինչպես եւ մնացած անունները:

Աշխարհաբարում, ինչպես գրաբարում, միայն *Աստված* բառն է, որ կարող է անորոշ ուղղականով գործածվել, եւ սա <u>բնական երեւույթ</u> է մեր լեզվում. *Աստված* բառն անորոշ ուղղականով ենք գործածում <u>բոլորս՝ մեծ թե փոքր, ե՛ւ գրավոր, ե՛ւ բանավոր խոսքում</u>: Մինչդեռ Տիրոջ անվան՝ անորոշ ուղղականով գործածությունը մեր արեւելահայ ժողովրդի ստվար զանգվածների համար խորթ է: Այն սովորական եւ բարեհունչ է միայն նրանց համար, ովքեր արդեն սովորել են դրան: Սակայն հարց է ծագում, թե կարիք կա՞ լեզուն արհեստականորեն փոխելու, ո՞րն է սրա իմաստը: Եթե դրա իմաստը վերոնշյալ երկրորդ պատճառաբանությունն է, ապա մի՞թե առողջ տրամաբանությունը հուշում է, թե լեզվական մի միավորի, տվյալ դեպքում՝ որոշիչ հոդի, զեղչումից կամ գործածումից որեւէ անուն կարող է բացառիկ պատիվ ընդունել կամ դրանից զրկվել: Եթե խոր մտածենք, ապա կտեսնենք, որ այսպիսի միջոցով Տիրոջ անունը բացառիկ դարձնելը, նրան այսպիսով պատիվ ընծայելը պարզապես անհեթեթություն է:

Այս խնդրի առնչությամբ կարելի է նաեւ աստվածաբանական մի նրբություն մատնանշել: Երբ Տիրոջ անունն ուղղականում անորոշ առումով ենք գործածում, որոշ նախադասություններում խիստ «որոշյալ»՝ պատմական ժամանակում ծնված, ապրած, ճշմարտապես մարդեղացած Աստվածորդուն վերածում ենք մի անորոշ, վերացական, կարելի է ասել՝ երեւութական, «քրիստոսի», որը կարող է լինել ընդամենը բազմաթիվ «քրիստոսներից» մեկը եւ ոչ թե միակը: Արեւելահայերենում շատ նախադասություններ հենց այս նրբիմաստն են ստանում: Եթե ասենք կամ գրենք, օրինակ՝ «Դռան առաջ *Հիսուս* է կանգնած», արեւելահայը շատ հանգիստ կարող է հարցնել. «Ո՞ր Հիսուսը, ի՞նչ Հիսուս»: Եվ կամ՝ «Մեր Տերը (Հիսուս) Քրիստոս է». հարց է ծագում՝ քրիստոսներից մե՞կը, ուրիշնե՞ր էլ կան: Մինչդեռ ամեն ինչ իր տեղը կընկնի, եթե մեր բնական լեզվով ասենք ու գրենք. «Դռան առաջ *Հիսուսն* է կանգնած», «Մեր Տերը *(Հիսուս) Քրիստոսն* է», եւ այսպես՝ ամենուր, ինչպես պահանջում են մեր լեզվի կանոնները: Ուրեմն, հաճախ, այսպես թե այնպես, նույնիսկ Տիրոջ անունն ուղղականում անհոդ գործածողները ստիպված են որոշիչ հոդը դնելու: Սակայն դժբախտաբար, կան մարդիկ, ովքեր, լսելով, որ Տիրոջ անունը պետք է անհոդ գործածել, անխտիր ամենուր, նույնիսկ վերոբերյալ օրինակների պես նախադասություններում, Տիրոջ անունն անհոդ են գործածում:

«Աստված» բառը եւ Տիրոջ անունը նույնպիսի կիրառություն ունենալ չեն կարող: «Աստված» բառն արտահայտում է ավելի վերացական հասկացություն, քան կոնկրետ եւ միակ անձ: «Աստված» բառը գործածում ենք թե՛ ճշմարիտ Աստծո, թե՛ հեթանոս չաստվածների, թե՛ մահմեդականների «ալլահ»-ի համար: Այն գործածում ենք Սուրբ Երրորդության առանձին Անձերի համար. Հայրն էլ է Աստված, Որդին էլ, Հոգին էլ: Մինչդեռ Հիսուս Քրիստոսը միայն մեկն է՝ մի կոնկրետ եւ միակ Աստվածորդի:

Պետք է նշել նաեւ, որ Տիրոջ անվան՝ անորոշ առումով գործածության համար չկա ոչ մի պաշտոնապես հաստատված եւ լրջորեն հիմնավորված գրավոր կանոն, որպեսզի ժողովուրդը հետեւեր դրան: Տիրոջ անվան՝ անորոշ ուղղականով գործածությունը հետսամուտ է արեւելահայերենի մեջ եւ երբեք չի ընդհանրացել ու ժողովրդի սեփականությունը դարձել, արհեստական է, ուստի ավանդույթ համարվել չի կարող: Յուրաքանչյուր լեզու իր օրենքներն ունի. գրաբարը՝ իր, աշխարհաբարը՝ իր: Բացի դրանից, ինչպես նշեցինք, գրաբարն ու արեւմտահայերենը, ինչպես եւ Ավետարանի բնիկ լեզուն՝ հունարենը, Տիրոջ անունը գործածում են այնպես, ինչպես եւ մնացած հատուկ անունները: Ուստի բնավ կարիք չկա, որ միայն մենք՝ արեւելահայերս, արհեստական եւ լրջորեն չտրամաբանված փոփոխություն մտցնենք մեր լեզվի մեջ այս հարցում:



Կարծում եմ՝ քանի որ այժմ արդեն եկեղեցական շրջանակում շատերն են որդեգրել այս գրաբարակերպ ոճը եւ սովորել դրան, նրանք կարող են պահել այն իբրեւ իրենց <u>անհատական ոճը</u>, եթե լեզուն այդպես ավելի գեղեցկահունչ են համարում, սակայն ո՛չ երբեք այս սովորությունը կանոն դարձնել (երբ նման կանոն չկա)՝ ուրիշներին եւս սովորեցնելով իբրեւ միակ ճիշտ ձեւ, առավել եւս մանուկներին, եւ այսպիսով պարզություն ու բնականություն սիրող ճշմարիտ քրիստոնեական ոգուն անհարիր արհեստականություն ու շիլաշփոթ մտցնելով հայոց լեզվի մեջ:

***Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ***

# ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅ ԳԻՐԸ



*Սկիզբը՝ էջ 4*

Նույնիսկ վերոհիշյալ Տիր աստծո մեհյանը՝ Վաղարշապատից Արտաշատ տանող ճանապարհին, անվանափոխվեց եւ կոչվեց «Որմիզդ գրչի դիվան»: Այնպես որ հայոց մեհենական պաշտամունքը եւ դրա հետ նաեւ նախաքրիստոնեական հայոց գիրը զգալի կորուստներ կրեցին Սասանյանների տիրապետության առաջին տասնամյակներին, եւ քրիստոնեության մուտքը Հայաստան առաջին հերթին ուղղված էր դրսից պարտադրված զրադաշտականության դեմ:

Բնավ չպետք է կարծել, որ հայերեն լեզվով եւ գրով քարոզելու խնդիրն առաջ եկավ միայն V դարի սկզբին կամ IV դարի վերջին՝ հայոց գրերի գյուտի շրջանում: Այդ խնդիրը ծառացավ իր ամբողջ բարդությամբ արդեն իսկ առաջին քրիստոնյա քարոզիչների Հայաստան մուտք գործելու հետ: Գրիգոր Լուսավորիչը լավ հասկանում էր, որ օտար հավատը օտար լեզվով (հույն թե ասորի) անհնար է տարածել եւ ընդունելի դարձնել հայ ժողովրդի լայն խավերի մեջ: Կեսարիայում եպիսկոպոս օծվելուց հետո՝ Հայաստան վերադառնալիս, նա կանգ առավ Սեբաստիայում՝ Փոքր Հայքի նշանավոր կենտրոնում, որպեսզի ընտրի հույն եւ ասորի քարոզիչներ, որոնք բոլորն էլ լավ տիրապետում էին հայերենին,- եւ դա ոչ միայն Հայաստանի նորաստեղծ եկեղեցիներում հունարեն եւ ասորերեն Ավետարանները բանավոր հայերեն քարոզելու համար, այլեւ այն պատճառով, որ առանց հայերեն վարժ իմանալու քարոզիչները չէին կարող հաղորդակցվել անմիջապես հեթանոս բնակչության հետ: Այս իմաստով շատ նշանակալից է այն փաստը, որ շուրջ կես դար անց Բարսեղ Մեծը՝ Կեսարիայի հոգեւոր առաջնորդը, իր 187-րդ թղթում՝ Փոքր Հայքի գավառներում եպիսկոպոս նշանակելու համար պարտադիր պայման էր համարում հայերենի հմուտ իմացությունը *(Այս առթիվ Յ. Մարկվարտն իրավամբ նշում է. «(Հայաստանի) արեւմտյան մասում իշխող հռոմեացիներն արհամարհանքով էին նայում բարբարոսներին եւ բնականաբար ոչ մի գաղափար չունեին նրանց լեզվի եւ ազգային առանձնահատկությունների մասին: Բոլոր մետրոպոլիտները չէ, որ կարող էին նույնքան խելացի գտնվել, որքան էր Մեծն Բարսեղը, որն ուշադրություն դարձրեց, որպեսզի Փոքր Հայքի եպիսկոպոսական աթոռների համար ընտրվեին հայերենին քաջահմուտ մարդիկ» (Յ. Մարկվարտ, Հայոց այբուբենի ծագումը եւ ս. Մաշտոցի կենսագրությունը (թարգմ. Գ. Աբգարյան) - «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երեւան, 1962, էջ 124-125):*

*Մեսրոպ Մաշտոցին նվիրված զեկուցմամբ Մարկվարտը նախապես հանդես էր եկել 1902 թվին Համբուրգում՝ արեւելագետների միջազգային կոնգրեսում, որը 1905 թ. արժանացավ Մոսկվայի Լազարյան ճեմարանի մրցանակին: Մարկվարտի սույն աշխատությունը՝ Über den Ursprung des armenischen Alphabets in Verbindung mit der Biographie hl. Maštʼocʼ (in: Studien zur armenischen Geschichte, Wien, 1917), առաջին անգամ հայերեն թարգմանությամբ լույս է տեսել 1911-1912 թվերին, երբ նշվում էր հայոց գրերի գյուտի 1500-ամյակը (Յ. Մարկվարտ, Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց ս. Մաշտոցի (թարգմ. գերմաներենից՝ Հ. Վարդանեան) - «Հանդէս ամսօրեայ», § 25 (1911), սյուն 529-544, 673-684, § 26 (1912), սյուն 41-54, 199-216, 742-750):*

Իր հետ բերած զգալի թվով օտարազգի կրոնավորների օգնությամբ Գր. Լուսավորիչը Հայաստանում հիմնեց հույն եւ ասորի դպրոցներ, բայց ոչ թե այդ լեզուներով քրիստոնեությունը ժողովրդի մեջ քարոզելու, այլ այդ լեզուներին գիտակ հայ թարգմանիչներ պատրաստելու համար, որոնք պետք է այնքան վարժ լինեին, որ եկեղեցիներում հունարեն եւ ասորերեն Ավետարանները միանգամից կարդային հայերեն: Օտար բնագիրն այլ լեզվով կարդալու այդ ձեւը կոչվում է հետերոէպիկ ընթերցում *(Г. Х. Саркисян, К предыстории армянской письменности,* ***«Кавказ и Византия», вып. 2, Ереван, 1980, стр. 15-20):***

Մյուս կողմից՝ հեթանոս քրմերի համար գիրը սրբություն էր, որի ընթերցման գաղտնիքը նրանք թաքցնում էին այլադավաններից՝ զրադաշտական լիներ թե քրիստոնյա: Ուշագրավ է հին հրեական գրի օրինակը, որը գործածվում էր մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբին՝ շուրջ 200 տարի, եւ աստիճանաբար իր տեղը զիջեց արամեական գրին. իսկ հրեա քահանաները մի որոշ ժամանակ շարունակում էին այն օգտագործել որպես գաղտնի գիր՝ միայն կրոնական գրառումների համար, որոնք պետք է մնային ժողորդից գաղտնի, մինչեւ որ այդ գիրն իսպառ անհետացավ ***(Չ. Լոուկոտկա, Գրի զարգացումը, Հայպետհրատ, Երեւան, 1955, էջ 131-132: Նոր հրեական քառակուսի գիրը ծագել է ավելի ուշ՝ ոչ թե հին հրեական գրից, այլ արամեականից):*** Նույն երեւույթը տեղի է ունեցել եւ Հայաստանում:

Չպետք է անտեսել, որ քրմերը հեթանոս հայ բնակչության ամենից գրագետ եւ կրթված խավն էին ներկայացնում: Նրանք ժամանակին դիմադրել էին Սասանյան առաջին արքայից արքաների օրոք Հայաստանում բռնի տարածվող զրադաշտական կրոնին եւ պահպանել հին հայոց հավատն ու դպրությունը, պատմական ու վիպական զրույցները, որոնց հատակտորները գրի է առել Խորենացին իր «Հայոց Պատմության» մեջ՝ հավաքելով Գողթան երգիչներից: Գրիգոր Լուսավորիչը չէր վարանում օգտվել նշանավոր քրմական տների հեղինակությունից եւ նրանց որդիներին անձամբ իր ձեռքի տակ առնելով՝ կրթում էր նոր հավատով: Այդ մասին են վկայում ինչպես Ագաթանգեղոսի Պատմությունը, այնպես էլ Սահակ Պարթեւի «Գիր աւանդութեան» գրվածքը *(Սրբոյն Սահակայ Գիր աւանդութեան յաղագս կարգի սպասաւորաց սրբոյ եկեղեցւոյ (Սոփերք Հայկականք, հտ. Բ, Վենետիկ, 1853, էջ 127-128)* («Եւ զոմանս յորդւոց քրմացն առեալ իւր՝ զառաջեաւասունս ձեռնասունս առնէր. փոյթ ուսման ի վերայ ունէր՝ ընդ հոգեւոր խնամով եւ երկիւղի սնուցանել: Որ յաստիճան եպիսկոպոսութեան լինէին արժանի կալոյ, առեալ ձեռնադրութիւն ի նմանէ» - *«Քրմերի որդիներից ոմանց (ս. Գրիգորը) առավ աշակերտ, ձեռնասուն դարձրեց. ջանում էր ուսում տալ նրանց հոգեւոր խնամքով ու երկյուղով դաստիարակել: Ով որ եպիսկոպոսության աստիճանին արժանի էր, նրան ձեռնադրում էր» (Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, աշխարհաբար թարգմ.՝ Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1977, § 845, էջ 141):* Մեծ Հայքի գավառների առաջին տասներկու եպիսկոպոսները հենց այդ քրմերի որդիներից էին, որոնք եղել էին Լուսավորչի <u>ձեռնասուն սաները</u>: Կարելի է ենթադրել, որ հենց ա՛յդ ճանապարհով նա նպատակ ուներ վերականգնել հին հայոց գիրը եւ այն եւս ի սպաս դնել Ավետարանի քարոզությանը: Չէ՞ որ եթե IV դ. վերջին ասորի Դանիել եպիսկոպոսն օտար դպրություններում որոնում էր հին հայոց նշանագրեր, ապա դա ավելի հեշտ էր անել նույն դարասկզբին, երբ շատ բան դեռեւս կորված չէր:

*Շարունակելի*

*Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր*

# ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ՝
## ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ՀԱՅԱՑՔՈՎ

*Սկիզբը՝ էջ 5*

Չկրկնենք, թե սայաթնովյան այս կամ այն խաղը, այս կամ այն բառն ու պատկերը ինչպես է վերլուծել ու մեկնաբանել Ն. Աղբալյանը, մանավանդ որ այդպիսի փորձ մեզնից առաջ անողներ եղել են: Սակայն հիշյալ տասը խաղերի մեկնության մեջ մեր ուշադրությունը գրավեց մի հանգամանք, որն արժե նաեւ հանրությանը ներկայացնել:

Ա տաղը վերլուծող հատվածը վերնագրել է «Քամանչա», Բ տաղի վերլուծության վերնագիրն է առաջին տողի կեսը՝ «Թեկուզ քու քաշը...», Գ տաղինը նույնպես վերնագրված է առաջին տողով՝ «Արի ինձ անգաճ կալ»: Բայց ահա «Վունցոր վուր դարիք բլբուլն» սկսվածքով Դ տաղի աղբալյանական խորունկ վերլուծությունն ունի այլ, առանձին վերնագիր՝ «Առաջին գովերգություն», Ե տաղը՝ «Մե խոսկ ունիմ»-ը՝ «Տրտունջք», «Մեջլումի պես կորավ յարս» Զ տաղը՝ «Պաղատանք», «Առանց քիզ ինչ կոնիմ» Է տաղը՝ «Ելք», «Դուն էն գլխեն» Ը տաղը՝ «Որոնում», «Յիս մե դարիք բլբուլի պես» Թ տաղը՝ «Երազային տեսիլներ» եւ «Ուստի՞ գու քաս» Ժ տաղը՝ «Զուգահեռ»:

Ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ վերլուծությունների վերնագրերը թեմատիկ-նպատակային են ու բնութագրական՝ քննարկվող տաղերի համար: Ուրեմն սայաթնովյան խաղերի աղբալյանական մեկնաբանությունները, մեր այս թռուցիկ բնորոշումներից զատ, պետք է լրջորեն դիտարկվեն նաեւ ա՛յս տեսանկյունով, որովհետեւ այդ վերնագրերը նաեւ յուրատեսակ կողմնորոշիչներ են: Այսպես, Ա տաղի վերլուծության «Քամանչա» խորագիրն ինքնին հասկանալի է. ինչպես խաղի մեջ, այստեղ էլ քամանչա նվագարանը դիտվում է որպես ընդհանրապես արվեստի խորհրդանիշ: Խաղը ոչ միայն քամանչա նվագարանի սովական գովքն է, այլեւ ***մարդ եւ արվեստ*** հարաբերության գեղագիտական իմաստավորումը քննադատի կողմից:

Բ սիրային տաղի մեկնության վերնագիրը վերցված է նրա առաջին տողից՝ «Թեգուզ քու քաշը»: Այստեղ է, որ Ն. Աղբալյանը դրսեւորել է բանագետի, տողի կառույցի եւ մեղեդու հետ նրա համապատասխանությունը մեկնելու իր բացառիկ հմտությունը, որով հասկանալի է դառնում սիրո ապրումի մի սքանչելի պահի պատկերումը, ոչ մեկին ոչ մի գնով՝ ոչ մի մարգարիտի կամ ալմաստի շարոցով, ոչ մի շահի ահ ու մահի սպառնալիքով իր սիրածին չզիջելու վճռականությունը:

Գ խրատական խաղի վերլուծության խորագիրն էլ վերցված է «Արի, ինձ անգաճ կալ» առաջին տողից: Հիմա, երբ արդեն ճշտվել ու հաստատագրվել է 1722-ը որպես Սայաթ-Նովայի ծննդյան տարեթիվ, ավելի է իմաստավորվում Ն. Աղբալյանի մի կարեւոր բացատրությունը. «Քամանչայից» 6 տարի առաջ, այսինքն՝ 1753 թ. մայիսի 1-ին գրված այս տաղի կոչականը՝ ***դիվանա սիրտը***, որին ուղղված է խրատական ամբողջ շարանը, Ն. Աղբալյանի համոզմամբ՝ հենց իր՝ բանաստեղծի սիրտն է, դրանով էլ խաղը դառնում է բանաստեղծի ներաշխարհի ու հոգեվիճակի ինքնավերլուծություն:

Դիմենք Աղբալյանին. «***Պարկեշտ մարդու մի մտատիպար*** ունի երգիչը, որ ***իր չափն է վարմունք գնահատելու եւ թյուր ընթացքից զգուշանալու***,- գրում է նա: - Ես ***ավելի խորն եմ գնում*** եւ ասում, թե այս տաղը գրված է ***իր սիրային կյանքի սկզբին, առաջին խանդավառությունից հետո մի անդրադարձում է սա իր վարմունքին եւ ընթացքին: Իր սիրտը խենթացած է սիրունի հմայքից, գուցե եւ համակրական ակնարկից: Այս խենթ սիրտը կարող է նրան հեռուն տանել եւ պարկեշտ մարդու սահմանից հանել:*** Արհեստավորական պարկեշտ միջավայրից նա ընկած է ***մի նոր միջավայր, ուր շատ է փորձանքը իր սրտի համար.*** ուստի ասում է ***ինքն իր սրտին***» (նույն տեղում, էջ 51, ընդգծ. մերն են - Ս. Մ.): Այսպիսով, իհարկե, չի նվազեցվում բանաստեղծության ընդհանրացնող ուժը, եւ այն չի դադարում լինել նաեւ ուրիշ սրտերի ու հոգիների կենսագրություն:



Ռ. Ռուխկյան. «Սայաթ-Նովայի գոզալը»

*Շարունակելի*

*Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ԱՂՈԹՔՆԵՐ ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԺԱՄԱԳՐՔԻՑ



## ԱՂՈԹՔՆԵՐ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Լո՛ւյս ճշմարիտ, որ լուսավորում ես աշխարհ եկող ամեն մարդու, որ եկար աշխարհ մարդասիրությանդ պատճառով, եւ բոլոր արարածները ուրախացան Քո գալստյամբ: Որ փրկեցիր մեր նախահայր Ադամին փործությունից ու մեր մայր Եվային մահվան երկունքից եւ շնորհեցիր մեզ Քո որդիները լինելու Հոգին, Քեզ գովաբանում ենք եւ օրհնում՝ ասելով. *Փառք Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն:*

2. Առավոտյան ժամի գալստյան հետ, Քրիստոս Աստված մեր, Լո՛ւյս ճշմարիտ, թող լուսավոր զգացումներ եւ պայծառ խորհուրդներ ծագեն մեր մեջ եւ ախտերի խավարը չպատի մեզ: Որպեսզի սրտանց օրհնենք Քեզ Դավթի հետ՝ ասելով. «Աչքերս արթուն են վաղ առավոտվանից, որպեսզի խորհեմ Քո խոսքերի շուրջ»: Լսի՛ր մեր ձայնն ըստ Քո մեծ ողորմության եւ փրկի՛ր մեզ, Տե՛ր Աստված մեր, Քո գթությամբ: *Այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:*

3. Դու պատվական Մայրն ես Լույսի: Արեւելքից մինչեւ արեւմուտք ժողովուրդները փառաբանություն են մատուցում քեզ, Աստվածածի՛ն, Երկի՛նք երկրորդ: Քանզի դու պայծառ ու անթառամ ծաղիկ ես եւ միշտ Կույս Մայր. որովհետեւ Հայրն ընտրեց քեզ, Սուրբ Հոգին հովանի եղավ քեզ վրա եւ Որդին խոնարհվելով մարմնացավ քեզանից: Աղաչի՛ր Նրան փրկել Իր ստեղծած աշխարհը եւ այն ազատել մեղքություններից:

### ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾ

Սուրբ Աստված, սուրբ եւ հզոր, սուրբ եւ անմահ, որ ծնվեցիր Կույսից, ողորմի՛ր մեզ:

Սուրբ Աստված, սուրբ եւ հզոր, սուրբ եւ անմահ, որ խաչվեցիր մեզ համար, ողորմի՛ր մեզ:

Սուրբ Աստված, սուրբ եւ հզոր, սուրբ եւ անմահ, որ մեռելների միջից հարություն առար եւ բարձրացար երկինք, ողորմի՛ր մեզ:

Փառք Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն: Սո՛ւրբ Երրորդություն, ողորմի՛ր մեզ, Սո՛ւրբ Երրորդություն, ողորմի՛ր մեզ, Սո՛ւրբ Երրորդություն, ողորմի՛ր մեզ: Տե՛ր, ների՛ր մեր մեղքերը, Տե՛ր, քավի՛ր մեր հանցանքները, Տե՛ր, ների՛ր մեր անօրինությունները:

Տե՛ր, այցելի՛ր Քո ժողովրդի մեջ եղած հիվանդներին, բժշկի՛ր նրանց Քո սուրբ անվան համար: Տե՛ր, հանգի՛ստ պարգեւիր մեր ննջեցյալ հայրերի եւ եղբայրների հոգիներին:

Տե՛ր, միա՛կդ առանց մեղքի, ողորմի՛ր մեզ: Տե՛ր, միա՛կդ առանց մեղքի, օգնի՛ր մեզ եւ ընդունի՛ր մեր աղոթքները: Քանզի Քոնն են փառքը, իշխանությունը եւ երրյակ սրբությունը: Տե՛ր ողորմյա, Տե՛ր ողորմյա, Տե՛ր, առաքի՛ր օրհնությունները: Ամեն:

### ՈՂՋՈՒՅՆ ՔԵԶ

Ողջո՛ւյն քեզ, աղաչում ենք քեզ, փառավորյա՛լ սուրբ, միշտ Կույս Աստվածածին Մա՛յր Քրիստոսի, մատուցի՛ր մեր աղոթքները քո սիրելի Որդուն, որ Նաների մեր մեղքերը:

Ողջո՛ւյն սուրբ Կույսին, որ ծնեց ճշմարիտ Լույս մեր Քրիստոս Աստծուն: Աղաչի՛ր Տիրոջը, որ ողորմի մեզ եւ ների մեր մեղքերը:

Կո՛ւյս Մարիամ Աստվածածին, հավատարիմ բարեխո՛ս մարդկության, աղաչի՛ր մեզ համար մեր Քրիստոս Աստծուն, Ում ծնեցիր, որ Նա ների մեր մեղքերը:

Ողջո՛ւյն քեզ, Կո՛ւյս, ճշմարի՛տ Թագուհի, ողջո՛ւյն քեզ, պարծա՛նք մարդկության, որ ծնեցիր մեզ համար Էմմանուելին, աղաչում ենք քեզ, հավատարի՛մ բարեխոս, հիշի՛ր մեզ մեր Տեր Հիսուս Քրիստոսի առաջ, որ Նա ների մեր մեղքերը:

### ՍՈՒՐԲ ՍՈՒՐԲ ՍՈՒՐԲ

Սուրբ, սուրբ, սուրբ, Տե՛ր զորությունների: Լի են երկինքն ու երկիրը Քո փառքով: Ողորմի՛ր մեզ, ամենակալ Հա՛յր Աստված: Սո՛ւրբ Երրորդություն, ողորմի՛ր մեզ: Տե՛ր Աստված զորությունների, մեզ հե՛տ եղիր: Քանզի չունենք օգնական մեր մեղություններում Քեզանից բացի: Ներիր ու քավի՛ր մեր հանցանքները, որ գործեցինք կամա եւ ակամա, գիտությամբ եւ անգիտությամբ, ծածուկ եւ հայտնապես: Տե՛ր, ների՛ր մեզ Քո սուրբ անվան համար, որով ենք կոչվում, ըստ Քո ողորմությա՛ն եւ ո՛չ ըստ մեր մեղքերի:

### ԱՂՈԹՔ

Տե՛ր Աստված զորությունների, որ կայիր նախքան հավիտյանները եւ կաս մշտնջենաբար, որ ստեղծեցիր արեգակն իբրեւ ցերեկվա լուսատու եւ գիշերը՝ բոլոր մարդկանց հանգստի համար, գոհանում ենք Քեզանից, Թագավո՛ր հավիտենական, որովհետեւ Դու շնորհեցիր մեզ գիշերն անցկացնել խաղաղությամբ եւ հասցրիր մեզ առավոտյան այս ժամին: Ուստի խնդրում ենք Քեզ, Տե՛ր մեր, Թագավո՛ր բոլոր հավիտյանների, ծագեցրու Քո երեսը մեզ վրա եւ լուսավորիր մեզ Քո աստվածային գիտության լույսով: Դարձրու մեզ, Տե՛ր մեր, լույսի եւ ցերեկվա որդիներ, եւ թող այս օրն անցկացնենք արդարությամբ, ողջախոհությամբ ու բարեկարգությամբ եւ մեր կյանքի մնացած օրերն ավարտենք առանց արատի, շնորհով, գթությամբ եւ մարդասիրությամբ Քո Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի, եւ պարգեւներով Սուրբ Հոգու, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն:

### ԱՂՈԹՔ

Աստվա՛ծ, որ լույս ես բխեցնում եւ արեւը ծագեցնում արդարների եւ մեղավորների վրա, որ ստեղծեցիր լույսը, որ լուսավորում է ամբողջ աշխարհը, Տե՛ր ամենքի, լուսավորիր մեր միտքը, սիրտն ու խորհուրդները եւ շնորհիր մեզ Քեզ հաճելին կատարել այսօր: Պահպանիր մեզ ամեն չարից, ամեն մեղքից եւ թշնամու ամեն զորությունից, մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով, Ում եւ կենարար ու համազոր Սուրբ Հոգու հետ օրհնյալ ես այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն:

## ԱՂՈԹՔՆԵՐ ԵՐՐՈՐԴ ԺԱՄԻ (այսինքն՝ առավոտյան 9-ի) ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Քո Սուրբ Հոգին, Տե՛ր բարի, որ երրորդ ժամին ուղարկեցիր Քո սուրբ աշակերտների եւ պատվելի առաքյալների վրա, մի՛ վերցրու մեզանից, այլ նորոգի՛ր մեր մեջ: Սուրբ սի՛րտ հաստատիր իմ մեջ, Աստված, եւ ուղիղ Հոգի՛ նորոգիր իմ մեջ: Մի՛ զրկիր ինձ Քո ներկայությունից եւ Քո Սուրբ Հոգին մի՛ հանիր իմ միջից: *Փառք Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն:*

2. Տե՛ր, որ երրորդ ժամին ուղարկեցիր Քո Սուրբ Հոգին սուրբ աշակերտներին եւ պատվելի առաքյալներին վրա, մի՛ հանիր այն մեր միջից, Տե՛ր բարի, այլ, աղաչում ենք Քեզ, Տե՛ր մեր Հիսուս Քրիստոս, Որդի եւ Բա՛ն Աստծո, նորոգիր մեր մեջ ուղիղ եւ կենարար հոգի, մարգարեության եւ ողջախոհության հոգի, սրբության, արդարության եւ իշխանության հոգի: Ամենակա՛լ, որ լույսն ես մեր հոգու եւ լուսավորում ես աշխարհ եկող ամեն մարդու, ողորմի՛ր մեզ: *Այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:*

3. Մա՛յր Աստծո, դու ճշմարիտ որթատունկն ես, որ կրեցիր կյանքի Պտուղը: Աղաչում ենք քեզ, շնորհո՛վ լի, եւ բոլոր առաքյալներին՝ մեր հոգու փրկության համար: Օրհնյալ է մեր Տեր Աստված, օրհնյալ է Տերը շարունակ. Նա հարթում է մեր ճանապարհները, քանզի Նա է մեր փրկության Աստվածը: *Այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:*

4. Թագավո՛ր երկնավոր, Մխիթարիչ Հոգի՛ ճշմարտության, որ ամենուր ես եւ լցնում ես ամեն ինչ, որ բարիքների գանձ ես եւ կյանքի պարգեւիչ, ե՛կ շնորհներով եւ բնակվի՛ր մեր մեջ, մաքրիր մեզ ամեն պղծությունից, Հոգի՛ բարի, եւ փրկի՛ր մեր հոգիները: *Փառք Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն:*

5. Ինչպես Քո առաքյալների հետ էիր, Փրկիչ, եւ խաղաղություն տվեցիր նրանց, շնորհով ե՛կ նաեւ մե՛զ մոտ եւ շնորհիր Քո խաղաղությունը: Փրկիր մեզ եւ խնայիր մեր անձերը: *Այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:*

6. Քո սուրբ տաճարում կանգնել ենք այնպես, ասես երկնքում ենք կանգնած: Աստվածածի՛ն, դու ողորմության դուռ ես, բա՛ց մեզ համար ողորմության դուռը:

### ԱՂՈԹՔ

Աստված բոլոր գթությունների եւ Տեր բոլոր մխիթարությունների, որ մխիթարեցիր մեզ ամեն ժամ Քո Սուրբ Հոգու մխիթարությամբ: Գոհանում ենք Քեզանից, որ շնորհեցիր մեզ աղոթել այս սուրբ ժամին, որում կրակի տեսքով հեղեցիր Սուրբ Հոգուդ առատ շնորհը Քո սուրբ աշակերտների եւ պատվելի առաքյալների վրա: Աղաչում ենք Քեզ, Մարդասե՛ր, ընդունի՛ր մեր աղոթքները, ների՛ր մեր մեղքերը եւ հեղի՛ր մեզ վրա Սուրբ Հոգուդ շնորհը: Մաքրիր մեզ մարմնի եւ հոգու ամեն պղծությունից, տար մեզ դեպի հոգեւոր կյանք, որպեսզի Հոգով ընթանանք եւ մարմնի ցանկությունները չկատարենք: Եվ արժանի արա մեզ ծառայել Քեզ սրբությամբ եւ արդարությամբ մեր կյանքի բոլոր օրերին: Քանզի Քեզ վայել են փառք, պատիվ եւ իշխանություն, Քո բարի Հոր եւ Սուրբ Հոգու հետ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն:

*Շարունակելի*

*Անգլերենից թարգմանեց*
*Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԸ*

# Չարի խնդիրը եւ նրանից ազատումը

Մեղսագործության հետեւանքները անդրադարձել են մարդու ինչպես անձնական, այնպես էլ հասարակական կյանքի վրա:

Երանելի Օգոստինոսն ասում է, որ առաջին մարդկանց կողմից Աստծո պատվիրանների խախտումն իր մեջ պարունակում էր բոլոր հանցանքները.

- հպարտություն, որովհետեւ մարդ արարածը ցանկացավ ավելի շատ պատկանել ինքն իրեն, քան Տիրոջը.
- սրբապղծություն, քանզի խախտեց հավատարմությունը Աստծո նկատմամբ.
- սպանություն, որովհետեւ իրեն մահվան մատնեց.
- հոգեւոր անառակություն, դավաճանություն, քանզի օձի հետ հարաբերվելն ու համաձայնվելը վերացրեց մարդկային հոգու անարատությունը, կուսությունը.
- գողություն ու շահամոլություն:

### Թշնամություն մարդկանց միջեւ

Մեղսագործությունը, որ նշանակեց Աստծուց հեռացում, ճեղքված ստեղծեց մարդու եւ Արարչի հարաբերությունների միջեւ եւ որպես դրա հետեւանք՝ թշնամություն մտցրեց մարդկային հարաբերությունների մեջ: Յիշենք, թե ինչպես մեղսագործությունից անմիջապես հետո Ադամը փորձեց մեղքը բարդել Եվայի վրա: Ավելի ուշ նրանց որդիներից մեկը սպանեց իր եղբորը: Փաստորեն մարդկային հարաբերությունների մեջ գոյություն ունեցող ագրեսիան բնութագրում է մարդկային պատմության ամբողջ հետագա ընթացքը: Առ Աստված համընդհանուր ուղղվածության բացակայությունը մարդկությանը զրկեց համախմբվածությունից եւ ստիպեց նրանց ամփոփվել միայնության եւ անհատականության կեղեւի մեջ: Աբբա Դորոթեոսն այս երեւույթն արտահայտում է սխեմայի տեսքով: Աստված շրջանի կենտրոնն է, եւ որքան մարդիկ մոտ են այդ կենտրոնին, այնքան նրանք մոտ են միմյանց եւ հակառակը՝ որքան նրանք հեռու են Տիրոջից, այնքան մեծանում է տարածությունը մարդկանց միջեւ:

### Թշնամություն աշխարհի հետ

Յեռանալով Աստծուց՝ մարդը, որ կոչված էր ամբողջ տեսանելի աշխարհը Աստծո հետ կապելու համար, այն տարավ իր ետեւից: Իսկ աշխարհը, կորցնելով կապը Տիրոջ հետ, թշնամացավ մարդու դեմ: Այդ իսկ պատճառով մարդը ստիպված եղավ իր գոյության համար պայքարել եւ հնազանդեցնել բնությունը: Աշխարհի հետ նման փոխհարաբերությունների արդյունքը եղավ ժամանակակից տեխնոկրատիկ քաղաքակրթությունը: Նույն այդ քաղաքակրթությունը մարդու մոտ առաջացրեց նաեւ ցանկություն՝ գործունեությամբ եւ նրա պտուղներով լրացնելու իր հոգու դատարկությունը, որն առաջացել էր Աստծո բացակայության պատճառով: Ժամանակակից մարդը, ապրելով տեխնոկրատիկ քաղաքակրթության կործանարար ուժերի ճնշման տակ, դադարում է գործել որպես անհատականություն մյուս անհատականությունների մեջ եւ շարժվում է իբրեւ խամաճիկ: Նա կորցնում է իր առանձնահատկությունը եւ դառնում է հասարակական մեքենայի պտուտակը:

***

Անցյալ դարում, երբ սկսվեց գիտատեխնիկական հեղափոխությունը, եւ ստեղծվեցին սոցիալ-քաղաքական, տնտեսական թեորիաներ, մարդիկ սկսեցին հավատալ, որ հասարակության ռացիոնալ կառուցումը եւ առաջընթացը կհաղթեն մարդկային կյանքում իշխող չարին, եւ կյանքը կդառնա երջանիկ:



Վերջին հարյուր տարում գիտությունը եւ տեխնիկան այնպիսի հաջողություններ ունեցան, որոնց մասին անցած դարում երազել անգամ չէին կարող: Բայց ի զարմանս շատերի՝ առաջընթացը չպակասեցրեց մարդու դժբախտությունները: Շատ ձեռքբերումներ էլ վերածվեցին առավել մեծ չարիքների:

*Շարունակությունը՝ էջ 8*

# Չարի խնդիրը եւ նրանից ազատումը

*Սկիզբը՝ էջ 7*

Նյութական բարեկեցության աճն ուղեկցվում է ընտանիքի ճգնաժամով, բաժանումների աննախադեպ աճով եւ մենության տառապանքներով: Գիտական հայտնագործություններն անմիջապես օգտագործվում են ռազմական ծրագրերի մեջ, որոնք էլ աշխարհը կանգնեցրին ամբողջական ոչնչացման վտանգի առջեւ: Տեղեկատվական ժամանակակից միջոցները (առաջին հերթին հեռուստատեսությունը) ծառայում են հասարակական գիտակցությունը մանիպուլացիայի ենթարկելուն, մարդկանց ճաշակներ, պահանջներ, կարծիքներ, ապրելակերպ պարտադրելուն: Բնության հնազանդեցումը բերեց գլոբալ էկոլոգիական աղետի: Բժշկության ձեռքբերումները չկանխեցին տանջալից հիվանդությունները, ծերությունը, իսկ ամենակարեւորը՝ մահը: Հարց է ծագում. մի՞թե չարն անհաղթելի է: Աստված տվե՞լ է մեզ ինչ-որ զենք չարից պաշտպանվելու համար:

## Օրենքը որպես զենք՝ չարի դեմ պայքարում

Մինչեւ Քրիստոսի գալուստը չարի դեմ ամենաուժեղ զենքը օրենքն էր, որը Աստված տվեց Մովսեսին Սինա լեռան վրա.

Ես եմ քո Տեր Աստվածը, որ քեզ հանեցի եգիպտացիների երկրից՝ ստրկության տնից:

Ինձնից բացի, այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար:

Վերեւում՝ երկնքում, ներքեւում՝ երկրի վրա, եւ երկրի խորքի ջրերի մեջ եղած որեւէ բանի նմանությամբ քեզ կուռքեր չպիտի կերտես: Չպիտի երկրպագես ու չպիտի պաշտես դրանց...

Քո Տեր Աստծո անունը զուր տեղը չպիտի արտասանես, որովհետեւ Տերը արդար չի համարում նրան, ով իր անունը զուր տեղն է արտասանում:

Հիշի՛ր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես եւ (այդ օրերին) պիտի կատարես քո բոլոր գործերը: Յոթերորդ օրը քո Տեր Աստծո շաբաթ օրն է: Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես...

Պատվի՛ր քո հորն ու մորը, (որպեսզի քեզ համար լավ լինի եւ) որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ:

Մի՛ սպանիր:

Մի՛ շնացիր:

Մի՛ գողացիր:

Քո հարեւանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր:

Ո՛չ քո մերձավորի տան, ո՛չ նրա ագարակի վրա աչք մի՛ ունեցիր: Ո՛չ քո մերձավորի կնոջ վրա, ո՛չ նրա ծառայի վրա, ո՛չ նրա աղախնու վրա , ո՛չ նրա եզան վրա, ո՛չ նրա էշի վրա, ո՛չ նրա անասունի վրա, ո՛չ այն ամենի վրա, ինչը քո մերձավորինն է, աչք մի՛ ունեցիր (Ելք Ի 2-17):

Օրենքն առաջին հերթին ընդգծում էր այն սահմանը, որից այն կողմ չպիտի անցներ մարդը, եթե նա ուզում էր խուսափել չարի անսահման իշխանությունից: Նման չափանիշների պարագայում մարդու վարքագիծը ոչ թե իր անձնական փոփոխական պատկերացումներն էին դառնում բարու եւ չարի մասին, այլ հավատարմությունը՝ այդ Օրենքը տվող Տեր Աստծուն:

Բացի այդ, յուրաքանչյուր ոք, ով փորձում էր պահպանել Օրենքը, համոզվում էր, թե որքան է ինքը հեռու կատարելությունից, թե որքան է վնասված մարդկային բնությունը՝ անհաստատ բարու մեջ եւ չարին հեշտությամբ ենթարկվող:

## Խիղճը օրենք՝ բոլորի համար

Չարին դիմակայելու միջոց տրվեց բոլոր մարդկանց, ներառյալ նաեւ այն ժողովուրդներին, որոնք անտեղյակ էին օրենքից: Յանկացած նորմալ մարդ ունի բարին ու չարը տարբերակող մի օրգան, որը մղում է բարի գործ կատարելու եւ չարից ետ պահում. դա մեր խիղճն է: Պողոս առաքյալը գրում է. «Եվ ուրեմն հեթանոսները, որ օրենք չունեն, բնականորեն են օրենքի գործերը կատարում, ... նրանք ցույց են տալիս, թե Աստծո Օրենքի պահանջները գրված են իրենց սրտերում՝ իրենց խղճի վկայությամբ եւ իրենց խորհուրդների մեջ միմյանց մեղադրելով կամ արդարացնելով ...» (Հռոմ. 2 14-15):

Սակայն ո՛չ օրենքը, ո՛չ խիղճը չկարողացան ազատել մարդուն մեղսագործության գլխավոր հետեւանքից՝ մարդկային բնության խաթարումից: Մարդկային հույսերը,



կապված այն բանի հետ, որ իրենք ի վիճակի են ինքնուրույն հաղթել չարին, ազատվել մահվանից եւ փրկել իրենց անձը, նման են Բարոն Մյունհաուզենի այն պատմվածքին, որի մեջ նա, իր մազերից կառչելով, իրեն փորձում է դուրս հանել ճահճից:

Նրանց համար, ովքեր փորձել են պահպանել օրենքը եւ հետեւել խղճի ձայնին, ակնհայտ է դարձել, որ միայն Աստծո միջամտությունը կարող է փրկել մարդուն:

*Թարգմանեց*
*Միքայել դպիր ՅԱԿՈԲՅԱՆԸ*
***Христианство и религии мира, «Про – Пресс»** հրատ.,*
*Մոսկվա, 2001 թ.*

---

**ԻՌՉԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԻ (ՇԱԽՈՎՍԿՈՅ)**

# ՄԵՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎԱՐՔ

*Սկիզբը՝ 2005-ի թիվ 16-18, 23-24, 2006-ի թիվ 2*

Հակակրոնականների՝ Աստծո մասին միայն մտածելու ժամանակ իսկ առաջ եկող անհանգստությունը երեւույթն է հենց այն դիվային վախի, որով ստեղծվել ու ոգեշնչվել են բոլոր սուտ կրոնները, որոնք կաշկանդում են իրական մարդկայնության զգացումները: Այո՛, կռապաշտությունն այդպիսի վախով է շարժվել: Բայց նույնիսկ հեթանոսական կրոնը միայն մութ վախով չէ, որ ստեղծվել է: Հեթանոսական կրոնականության որոշ ձեւերում եւս կարելի է անկասկած գտնել նաեւ ճշմարիտ կրոնական վախի սկզբնական տարրեր:

Մոր վախը՝ արթնացնելու քնած զավակին, ամուսնու վախը՝ անհանգստացնելու հիվանդ կնոջը, մարդու վախը՝ ընկերոջը մատնելու, իր խոսքին, ամուսնությանը դավաճանելու, ուրիշի գաղտնիքը հայտնելու, սեփական համոզմունքներին անհավատարիմ գտնվելու, այս բոլոր թեւ ո՛չ կրոնական, սակայն արդեն բարոյական վախերը վերաճում են կրոնական գիտակցության:

Մարդու իրական հոգեւոր կյանքը միշտ եղել եւ մնում է Աստվածային Գոյության առաջ մարդու անբավարարության ու անկատարության ենթագիտակցական ու գիտակցական բացահայտումն իր մեջ: Եվ կրոնը, նախեւառաջ, արդարացի ու ջերմագին ընդունումն է սեփական կյանքը բարձրագույն ու բացարձակ Բարիով լցնելու անհրաժեշտության:

Բոլոր հին հեթանոսական, նույնիսկ բոլորովին պարզունակ ու հոգեքանորեն մութ կրոնների էությունն ու մասնակի ճշմարտությունը ոչ թե նրանց ոչ ճշմարիտ փիլիսոփայության մեջ է, ոչ թե Բարձրագույն Գոյության մասին նրանց միամիտ, մասամբ մանկական ու սուտ, մարդակենտրոն ու դիվակենտրոն պատկերացումների եւ վերջիններիս հետ կապված ծիսական ապրումների մեջ, այլ ավելի բարձր, լավ եւ հզոր գոյությունից մարդու կրոնական մետաֆիզիկական կախվածության զգացումի՝ մարդու մեջ հայտնաբերման ու հաստատման մեջ:

Մարդկության մեջ կրոնական գիտակցության զարգացումը կարելի է նմանեցնել այբուբենի հետ մանկան հարաբերությունների աստիճանական զարգացմանը: Սկզբում մանուկը ոչինչ չի տեսնում այնտեղ, բացի միահյուսվող սեւ բծերից. հետո սկսում է տարբերել առանձին տառեր՝ ըմբռնելով նաեւ դրանց հնչյունական իմաստը. հետո սովորում է կարդալ ամբողջական արտահայտություններ՝ հասկանալով դրանք, եւ վերջապես, ճանաչման մեկ գործողությամբ, հասու է դառնում ամբողջ գրքի, բազմաթիվ գրքերի բովանդակությանը: Բոլոր կրոնական ապրումներում կա մեկ ճշմարտություն, առանց որի չկա ոչ կրոն, ոչ կեղծ կրոն: Այդ ճշմարտությունը բարձրագույն աշխարհի եւ դրանից սեփական անձի կախվածության ընդունումն է: Մարդկային հոգու այդ նախնական խոնարհության մեջ է բոլոր կրոնների սկիզբը: Իսկ կրոնի կատարելությունը կախված է միայն նրանից, թե մարդիկ ում եւ ինչն են իրենցից վեր դասում, ում եւ ինչի առաջ են երկրպագում, ինչ ճշմարտությունների առաջ են ակնածանքով խոնարհեցնում իրենց սիրտը: Կոկորդիլոսին, կովին, ցուլին, օձին կամ մոլորակներին երկրպագությունը մարդուն չի բարձրացնում Աստծո արքայություն: Այդ պատճառով էլ կան կրոններ, որոնք չեն բարձրացնում, այլ մետաֆիզիկորեն իջեցնում են, ցածրացնում, հոգեպես սպանում մարդուն... Ուստի եւ առաքյալներն ու Ավետարանի քարոզիչները պայքարում են ոչ միայն անհավատության դեմ, այլեւ կեղծ հավատքի: Եվ բոլոր հավատների ու ճշմարտությունների հավասարեցումը մարդկային գիտակցության մթագնման հայտանիշ է:

Կրոններում, ինչպես մարդկանց մեջ, տարբեր են հոգեւոր մաքրության ու բարձրության աստիճանները:

Բացարձակ Կրոնը՝ հոգու ճշմարտության ապոթեոզը (աստվածացում, մեծարում), մարդացած Աստված Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատն է, որը ոչ մի սահման



չի դնում կատարելության համար. «Կատարյա՛լ եղեք, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»:

Որքան բարձր է կրոնը, այնքան ավելի բարձր վախի հետ է զուգակցված: Ուստի այն պնդումը, թե կրոնը ծնվել է «վայրենիների վախից», թե՛ կրոնի, թե՛ վախի վայրենի ըմբռնում է:

## ՄԱՍ Դ.

Հոգեւորապես նրբացած հոգին, մոտենալով բարձրագույն աշխարհին, ընդունակ է խիստ դողալու: Դիվային աշխարհն արդեն օտար է նրան, իսկ հրեշտակայինին դեռ չի հասել, եւ երկնքին մոտ հոգին ընդունակ է վախենալու հրեշտակներից, թեեւ հրեշտակների մոտեցման տարբերությունը դեւերի մոտեցումից հենց վախերի բացակայության եւ մարդուն խաղաղություն, խոնարհություն ու սեր պարգեւելու մեջ է:

«Անտեսանելի ոգու ներկայությունից մարմինը վախով է բռնվում, իսկ հրեշտակի ներկայությունից խոնարհների հոգին ուրախանում է»,- ասում է Հովհաննես Կղեմաքոսը: Հրեշտակներն առաջ են բերում բարձր դող, որն իր ոգով ու հետեւանքներով մեծապես տարբերվում է դեւերի առաջացրած վախից: Այդ վախը կարելի է կոչել «անհամապատասխանության վախ»: «Մի՛ վախեցիր, Զաքա՛րիա, որովհետեւ քո աղոթքը լսվեց»,- ասաց Տիրոջ հրեշտակը Հովհաննես Մկրտչի հորը, երբ վերջինս, նրան տեսնելով «խնկասեղանի աջ կողմում», «շփոթվեց, եւ վախ ընկավ նրա վրա» (Ղուկ. գլ. Ա): «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ»,- ասաց հրեշտակն ամենամաքուր Կույսին, երբ հայտնվեց նրա առաջ (Ղուկ. գլ. Ա): Խոնարհ ու մաքուր սիրտ ունեցող հովիվները «մեծ վախով բռնվեցին», երբ տեսան հրեշտակին, բայց նրանից լսեցին. «Մի՛ վախեցեք, ես ձեզ մի ուրախություն եմ ավետում, որը կլինի բոլոր մարդկանցը» (Ղուկ. գլ. Բ):

Մարդկային հոգին յուրահատուկ կերպով է դողում գերբնական աշխարհին մոտենալիս եւ ուրիշ կերպ վախենում հակաբնական աշխարհից: «Մի՛ վախեցեք, այդ Ես եմ», - ասում է հարուցյալ Տերն Իր աշակերտներին, որպեսզի հանգստացնի նրանց, որ վախեցել էին հարության անսահման ճշմարտությունից:

Մոտենալով վերջին խորհրդին՝ Աստվածամարդու չարչարանքներին ու սոսկումներին, մենք պետք է լռենք: Մեր միտքը չափազանց սահմանափակ է եւ չափազանց աղոտոտված անգիտությունից աճած ցածր հասկացություններով, իսկ մեր սրտում շատ քիչ է սերը: Մենք կարողություն չունենք, նույնիսկ վերացականորեն, հպվելու սարսափի այն անդունդին, ուր աշխարհի փրկության համար Իրեն իջեցրեց, Իր երկրավոր կյանքի վերջին ժամերն անցկացրեց Տեր Հիսուս Քրիստոսը: Ավետարանն ասում է, որ Գեթսեմանիի պարտեզում Նա տրտմում էր ու տագնապում: Նրա տագնապը երկնավոր Հորից մեր կտրված լինելու եւ Հորից մեր բաժանվածությունն Իր վրա վերցնելու սարսափն էր: Ամեն ինչում Հոր կամքի հետ միացած՝ Տերը եկավ Իր վրա վերցնելու եւ բժշկելու բոլոր մարդկային տառապանքները, որ առաջ են եկել մարդու՝ Աստծուց հեռանալուց: Նա Իր վրա առավ անցյալ եւ ապագա դարերի մարդկության բոլոր տառապանքները: Աստծուց բաժանված լինելու (աշխարհում մարդկանց կողմից գիտակցված կամ չգիտակցված) ողջ տառապանքը մտավ ամեն ինչում կատարելապես Հորը միացած Նրա անմեղ բնության մեջ: Գեթսեմանիի եւ խաչելության սարսափը միայն Նրա՝ Հիսուսի սարսափը չէր, այլեւ Աստծուց բոլոր մարդկանց, ժողովուրդների ու դարերի հեռացման ու կործանման սարսափին վիճակակից լինելու սարսափը... Դա «*առանց Աստծո աշխարհի*» *սարսափը* սեփական անձի վրա վերցնելու սարսափն էր, որն իր լրմանը հասավ գողգոթական բաժանվածության վերջին՝ փրկագործական մահվան պահին. «Աստվա՛ծ Իմ, Աստվա՛ծ Իմ, ինչո՞ւ թողեցիր Ինձ»... Եվ այժմ ամեն մարդ Քրիստոսով իր վրա է վերցնում մարդկության պատմության մեջ եղած այդ ամենասարսափելի եւ ամենալուսավոր պահի ցոլքը՝ *ոչ սեփական մեղքի* տանջալի ցավը...

*Շարունակելի*
***Թարգմանությունը՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի ՔԿ եւ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԿ
**հեռախոս՝**
**(0+231) 54510, 56780**
Ստոր. տպագր. 16. 3. 2006 թ.
**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**